

Droschak

ORGANE

de la Fédération

Révolut. Arménienne.

ԴՐՕՇԿԿ

Adresse:

RÉDACTION DU JOURNAL

„Droschak“

GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՃՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ՀՆՈՅԸ

Մի կտոր գեղնած թղթի վրայ, ստացած արեան երկրից, շարադրած թագստեան մէջ, նամակագիրը այսպէս է պատկերացնում Ալճափագի վիճակը.

«... Որ գիւղ գնաս, որ տուն ներս մտնես, ոչինչ չես տեսներ տան մէջ, բացի մի քանի մաշւած, փտած քուռչի կտորներ. ոչ ալ հագերնին շոր ունին. դռակ-վերմակ այդ փտած քուռչի կտորներէն է. Տներու մէջտեղը կայ թոնիր, որ առաւօտը կը վառեն, հողէ պոստուկով կը դնեն կերակուրը թոնրի մէջ — ձաւար եւ ջուր, ուրիշ բան չկայ. եթէ չորթան դտան, որ հազուադէպ է, կը լեցնեն մէջը, թէ չէ այնպէս կուտեն, առանց իւղի... Իսկ երկրայեան, երբ պառկելու ժա-մանակը կուգայ, տան մէջ որքան մարդեր ու կիներ կան, կը հաւաքին թոնրան շուրջը, ոտքերնին կը տան թոնրին, վրանին կ'առնեն քուռչի կտորները, եւ այդպէս կը պառկին, և տակերնին ոչինչ չկայ... Նորածին երեխայի համար անգամ օրօրոց չկայ — խոտից հիւսած պարանոցներ կապելով սիւններից, կը լեցնեն խոտ ու մէջը կը դնեն մանուկը. վրան կը ձգեն քուռչի կտոր մը, եւ վերեւէն դարձեալ խոտ կը լեցնեն. պալուհներն ալ խոտէ հիւսած է: Եւ դեռ ծնողներ կան, որ խոտի մէջ պառկած մանուկը բախտաւոր կը համարեն»...

Ահա տղերը մի ալ թղթակցի, ահանատես Վանի ծորագոյն դէպքերին.

«... Մասնութիւնները վերսկսեցին կառավարու-թիւնը, որ զրամ հունի ոստիկաններին եւ ոչ զինուորային վճարելու՝ առատօրէն կը վարձատրէ լրանները եւ մասնիչները. Ասոնց եռանդին շնորհիւ խուզարկու-թիւններուն վերջ չկայ... Անցեալ գիշեր, երբ տուն մը չըլապատեցին խուզարկելու նպատակով, ներս եզոզներէն մին կը փորձէ փախչիլ. ոստիկանները կը բռնեն զինքը եւ կըսկսին ծեծել. հրացանի կոթով գլուխը մի քանի անգէ կը կոտրեն, քաշքշկով կը տանին կը ձգեն բակին մէջ, եւ նորէն կըսկսին ծեծել. Մայրը եւ քոյրը կը թոնրան պաշտպանութեան. կը խնդրեն որ գէթ չծեծեն. կը թողնեն տղան ու կըսկսին մօրը եւ աղջկան ծեծել. հրացանի կոթեր կը ջարդեն անոնց վրայ... Մնտուկները կը կոտորեն, կը կոչուպտեն եղած չեղածը. Տան կը թողուն մայրն ու աղջիկը կ'իսամեռ վիճակի մէջ, իսկ տղան կը տանեն բանտ, որ վաղուց լի է անմեղներով»...

Եւ իբրեւ համատարած ցաւ, — կոտորածի սարսափը, նկարագրած այս բառերով Վասպուրականից եւ Էրզրումից, երկու միմեանցից անտեղեակ՝ անձանց ձեռքով.

«... Անհաւատներ, դուք գեաւուր թաղաւորներու օգնութեան կը դիմէք մեր դէմ. Գարունը հասնելուն պէս՝ կը տեսնէք թէ ինչ արժէք ունի այդ օգնութիւնը. Մեր ձեռքէն ստացած ջարդերէն յետոյ՝ զիսեցէք ուր կուգէք: Ահա ամէն ինչ պատրաստ, սուլթանի հրա-մանին է որ կըսպասենք. Դուք ալ, գեաւուրներ, ձեզ խոստացած օգնութեան սպասեցէք»...

Սույ. քաղց գիւղերում:

Խուզարկութիւն քաղաքների մէջ:

Կոտորածի երկիւղ ամբողջ երկրում:

Դա է անգարդ, անխարդախ պատկերը Հայկական աշխարհի, որ անցնելով 25 տարւայ խոստումների մի ամբողջ շրջան, հարուստ միջազգային դաշնագրերով և ընթերցանային ծրագիրներով, նետած է այսօր յուսահատ ջղաձգութեան գիրկը, զուրկ իր լաւագոյն յոյսերից և ուժերից...

Այլևս չմնաց աշխարհի երեսին ոչ մի անկիւն, որ հեռաւոր կերպով իսկ հաւասարէր Հայ-հայրենիքին, իր թշուառութեամբ, ցաւերով իր զոհերի քանակով և որակով: Հայը հող ունի, բայց հաց չունի. տուն ունի, սակայն ոչ ապաստան. ոտքեր, բայց առանց շրջելու իրաւունքի. լեզու, սակայն անխօս. գիր ունի, բայց գիրք չունի. մեռելներ անթիւ ու անհամար, բայց առանց գե-րեզմանատան:

Կա՛ն ժամանակ, որ հայկական շարժման արշալոյսը բղխում էր, բայց ընդհանուր տխուր վիճակից, և՛ այն բախտաւոր հաւատքից, որ դարերի կրակից անցած այդ երկիրը տածում էր դէպի գաղափարը, դէպի մարդիկ, դէպի իրերի ընթացքը: Այսօր այդպէս չէ: Հայկական յեղափոխութեան գլխաւոր հն ոցը այժմ հայի բազ-ցառիկ թշուառութիւնն է, անսահման՝ ինչպէս երազ և խորունկ՝ ինչպէս ծովը:

Անդարձ են քաղաքական միամտութեան այն բախ-տաւոր օրերը, երբ հայկական ապստամբութիւնը հա-մարում էր արդիւնք դիւանագիտական թագնած խաղերի. երբ Ռուսաստանում, կատաղած փոքրիկ ազգի վերածնութեան շարժումներից, բթամիտ յամառութեամբ այդ շարժումը վերագրում էին անգլիական ինտրիգներին, իսկ Անգլիայում, տարւած հակառուսական ծայրագոյն զգուշութեան հովերով ամէն մի քայլ Հայաստանում յայտարարում էր իւրեւ ծնունդ ալով միապետութեան հակաթրքական ծրագիրների, զոհելով ա շ կ ա ռ ա յ արգարութեան գաղափարը դիպլոմատիական զազիր միտումների. կամ երբ նոյնիսկ սուլթանական ըէֆէմի մի ալ զժբախտ զոհը, Երիտասարդ Թիւրքիան՝ փոխանակ փառելու հայկական բարձրավանդակի վրայ սկսած քաղաքական արիւնոտ բողոքին, իր ամբողջ մաղձը թափեց՝ հաւատարիմ մօնօլական արեան՝ այն անձնւերների վրայ, որոնք՝ մայր-ժողովրդի անթիւ զոհերին միացած՝

փորձում են բանալ սքանչելի մի տեսարան Փոքր-ասիական անապատի մէջ, բռնապետութեան շունչով այրած, խոպանացած վայրերում... Այլապէս պնդողները բթամիտ կոյրեր են և կամ վարձկան սինլքորներ...

Հայկական կռիւր—փառք և պատիւ նրան—չունեցաւ և ոչ իսկ շօվէն, նեղ-ազգայնական շեշտ, շատ բնական մի ժողովրդի համար, որ հակառակ իր ընդունակութեան և բարձրութեան, իբրև ստրուկ ծառայեց մի այլ ցեղի, ստոր իրանից, մտաւորապէս թոյլ քան ինքը, հռչակաւոր իր ծուլութեամբ և անշարժ բնազդներով:

Տարրական արգարութեան պարզ ինդիք էր դա, մի համեստ պահանջ, որ շնորհիւ անսանձ բռնապետութեան դժոխային դաւերի՝ դարձաւ անհաշտ կռիւ, վիթխարի պայքար, անյուր հալածանքների մի անծայր շարան:

Սուլթանութիւնը հրճեց, թագստեան մէջ գոռոզացաւ իր արիւնոտ ձեռքի գործերով, սակայն մոռացաւ, որ մարդկային պատմութեան մէջ շատ անգամ բռնութեան դէմ ըմբոստանալու ամենալաւ խթանը եղել է սովը, հալածանքը, անծայր աղքատութիւնը, աւերակը: Տանջարան-Բաստիլը՝ ազատութեան առաջին կոթողն եղաւ: Եւ սովն էր, որ մղեց Պարսիզը, — յեղափոխութիւնը՝ դէպի Վերսալ, — բռնապետութեան բունը... Տարօրինակ, յաճախ անմեկնելի մի ճշմարտութիւն է այդ, որ փայլում է ինչպէս անհերքելի փաստ՝ յեղափոխական բոլոր շրջաններում, ժողովրդական ապստամբութեան դիւցազնական էջերի մէջ:

«Այս էլ մի կեանք չէ» — ահա հայ ժողովրդի տխուր բայց անխուսափելի վճիռը հանդէպ այն սոսկալի տեսարանի, որ ներկայացնում է նրա հայրենիքը, տունը, դաշտը, նրա ներկան իր ամբողջութեամբ: Եւ երբ մի խաղաղ աշխատանքի սիրահար և կրօնքի երկիւղածութեամբ ներշնչւած ժողովուրդ հասնում է այդ ծանր եղբակցութեան, — դա պիտի համարել սկիզբն մի բնորոշ շրջանի,

յուսահատ խլրտման մի նոր աղբիւր: Եւ եթէ երբեմն այդ խլրտման հնոցը մասամբ էլ ազատութեան տենչն էր կամ ռազմիկի ըմբոստացումը, այժմ այդ հնոցը, գլխաւորապէս թշուառութիւնն է, քաղցած մանուկների ճիչը, արիւնն ու դիակները, և կամ համազգային վրէժ-խնդրութեան այն վիթխարի պարտականութիւնը, որ յօշոտած մի սերունդ դրել է նորագոյն սերունդի վրայ, իբրև հրամայական մի կտակ, գրւած զոհերի արիւնով...

Սուլթանական ընթերցումը իր փրկութեան համար ամբողջ Հայաստանը դարձրեց մի Ալճափազ. նա ուզեց սովի, աղքատութեան և աւերակների մէջ թաղել հայկական ազատութիւնը, արթնացող ժողովրդի իրաւունքները: Բռնապետութեան դարեւոր սխալն է այդ, որին զոհ գնացին անթիւ գահակալ-ոգնագործներ, որոնց, անկասկած պիտի հետեւեն նրանց նորագոյն ներկայացուցիչները...

Ահա միջինաւոր մարդոց մի համախմբում, որ այլևս ոչինչ չունի կորցնելու, — նրանից խլեցին իր խաղաղութիւնը, իր օջախը, պատիւը, նրան յօշոտեցին ամուսնական առագաստի մէջ, եկեղեցում, դաշտի վրայ, ամբողջ տարիներ, գիշեր և ցերեկ: Ինչո՞ւ համար և ո՞ւմ սիրուն նա պիտի թանկ գնահատի իր կեանքը, իր օջախը, հարկանի խաղաղութիւնը, երկրի հանգիստը...

Եւ ո՞վ կարող է ասել, որ այս մեծ յուսահատութիւնը մեծ շարժման հնոց չի դառնայ մի ազգի համար, որի պրօպագանդի աղբիւրը լոկ ազատագրական, ոգևորւած քարոզը չէ, այլ մերկ, անպաճոյճ իրականութիւնը, ուր լացը՝ կերպարանափոխում է բողոքի, յուսահատութիւնը՝ ապստամբութեան...

Հայկական կարմիր արիւնը՝ սուլթանը համարեց իր փրկութեան կարմիր արշալոյս, իսկ համազգային լացն ու կոծը՝ իր լսելիքը փայփայող քնաբեր մեղեդի:

Այդ լացն ու կոծը կը դառնան ռազմի երգեր...

Հ Ա Յ Ո Ր Դ Ի Ն Ե Ր Ը

Ինքն էր, որ Երազիս մարմարեայ եզերքներուն վրայ, այս գիշեր, Ապառաժի մը նման անյաղթելիօրէն ոտքի, Իր ըմբոստացողի հրեղէն գլուխն ասողերուն մէջ մխրձելէն, Ու իր ձեռքը ատելութեան սուրբերովը զինած, Հողին փրկութեանը սիրովը հրաշացած եղբոր մը նման, Որ եղբոր մը օտարացումէն իր հոգին կ'արիւնի, Խօսեցաւ ինծի Ան, և իր բառերը իրարու ետեւէ, կարգ առ կարգ՝ Խիստ էին և քաղցր և ճշմարիտ և քինայող և առնական...

«Եւ ահա աստիկ ես եմ, ո՞վ մեղկութեան ու անշարժութեան զաւակ, Որ աղմկայողօրէն այս իրիկուն հեռուններէն կուգամ, Բու քնացողի անտարբեր ու անգործօն ու եսական ու տկար,

Երիտասարդի մարմինը ու էութիւնը ու հոգիդ,
Բազուկիս հարածովը ու սուրբորուս շառաչին հետ,
Կռիւներու հարկադրիչ ժամերուն համար, վերջնականապէս ցնցելու...
Ունկնդրէ՛ իմ ձայնիս որ այս վճռականութեան օրերուն
Մեր ցեղին, մեր վրէժին ու մեր արիւնին աղաղակն է ահաբեկը,
Ու խառնէ, ընկերացիր, եղբայրացիր, սա՛ մեր արիւնարբու ամբոխին հետ՝
Եթէ դեռ քու հոգիդ մէջ ազատութեան ունէ կայծ վառ մնաց,
Եթէ դեռ քու բազուկներդ քաջութիւնը ունին թշնամիներ հարածելու,
Եթէ սիրտդ գէթ անգամ մը խոցուեցաւ մեր մայր-հողին մահացումէն,
Եթէ ցեղիդ տառապանքէն ու անմեղներու կոտորածին մղձաւանջէն,
Քու ներսիդիդ ատելութեան ու բարկութեան անտառները բարձրացան...
Եթէ դուն դեռ կեանքիդ մէջը պիտի կրնաս նպատակի մը փաթեթիլ,
Եթէ դեռ քու աչուրներդ այդ անօգուտ արցունքներէն չի կուրացան...
Եթէ դուն քու աղօթքներդ Ատելութեան գոռումներու փոխեցիր,
Եթէ ցեղիդ ռազմական ու արեգակէ արիւնին՝
Երակներուդ ու գլխիդ մէջ բորբոքելը դեռ կըզգաս,
Եթէ դեռ Արամին, Տիգրանին, Արտաշէսին և Վարդանին,
Յաղթանակող զօրութիւնէն քու մէջդ շունչ մը մնաց,
Եթէ Սերոբներու, Փարեաններու, Պետօներու և Ժիրայրի,
Դիւցազնական քայլերէն քու երազողի նայածքներուդ առջև,
Անձնաւորութեան, վրէժի և ազատութեան ճանապարհ մը բացեցաւ,
Ոտքի կեցիր այն ատեն, եղբայրացիր խումբերուս ու մրկէ՛ անոնց հետ,
Որովհետեւ, գիտցիր որ, այս զոհաբերումի, ընդվզումի և յոյսի օրերուն,
Մեր ամէն մէկուն համար անկողնի մէջ հոգի տալը վատութիւնն է վատութիւններուն...»

Յանկարծ խումբերը հեռացան արեւածագին կրակներուն մէջէն,
Ու իրենց կամաւորի գիտակից ու վճռական քայլերուն հնչիւնը երկաթեայ,
Մարմարակոյտեր փշոռող անհամար կռաններու հնչիւնը ունէր...
Մինչդեռ թշնամիներէն անջատած գլուխներ ջահերու պէս կը բոցավառէին՝
Իրենց ուսերուն վրայ բարձրացուցած սուրբորուն կատարներէն...
Ու տեսայ որ տաք արիւն մը կը քսուէր, խռչափողերէն, կաթիլ առ կաթիլ, դէպի վար,
Անոնց ամէն մէկուն լայն ու զօրաւոր ու մերկ ծոծրակները թրջելէն...

Եւ ես այն ատեն նախանձութեամբ ու տարփանքով հողին վրայ ծնրադիր՝
Իրենց հերոսի քայլերուն հետքը երկիւղածօրէն համաւերցի...

ՍԻԱՄԱՆԹՕ

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԵՒՐՕՊԱՆ

Երկիրը փոթորկում է շարունակ, դէպքերը արագ-
արագ գահափոխում են իրար ետեւից, կռիւն՝ մոլեգին
ու յուսահատ՝ շարունակում է երկուստեք, — ժամանակը
յդն է ահաւոր անակնկալներով և ոչ ոք ապահով չէ
արեւելեան այդ ժխորի մէջ՝ ոչ թիւրքը, ոչ մակեդոնացին,
ոչ բուլգարը, ոչ իսկ Եւրոպան։ Զէնքերի շաչիւնը դադար
է առել կարծէք, և խօսքը ուժանակին է։ Ռուսը
պայթում է սասանեցուցիչ որոտումով երկաթուղային
կամուրջների տակ, տաճկական ու եւրոպական հիմնար-
կութիւնների մէջ. զարգանք է պատում մահափախան
անահաւատ խուժանին և Համիդի զօրքերին։ Հէնքերը
խորտակում են ուժանակի հարածներին, թողնելով
իրենց փլատակների տակ բազմաթիւ զոհեր — թիւրք,
պաւ, եւրոպացի...

Սալոնիկի վերջին անցքերը ուժգնօրէն ցնցում են քա-
ղաքակիրթ ժողովուրդներին, մի տեղ զգանք ու զայրոյթ,
մի այլ տեղ հիացում պատճառելով։ Անարխիստներ,

ոճրագործներ, ձայնում է պոռնիկ մամուլը, ըստ վաղեմի
սովորութեան... Ոճրագործներ, գոռում էր նոյն մա-
մուլը 96-ի աշնան, երբ ուումբը առաջին անգամ որոտում
էր Կ. Պոլսի փողոցներում, Օսմանեան բանկի առջև,
երբ նա եկել էր ազդարարելու, որ հալածողութեան դատը
տակաւին չէր խեղդած հազարաւոր նահատակների
արեան մէջ, որ յեղափոխական ամենաչնչին փոքրամաս-
նութիւնն անգամ իր յուսահատ վճռականութեամբ
կարող է սասանեցնել մի ահագին պետութիւն, կարող
է փոթորկել դիւանագէտների հանգիստը...

Ի՞նչ փոյթ հայ ու մակեդոնացի կտրիճներին, թէ
անարժան մամուլը «անիշխանական» է հռչակում
նրանց. ի՞նչ փոյթ, թէ եւրոպական նացիօնալիստները,
շահի, Կապիտալի ներկայացուցիչները, փրփուրը բերին՝
անիծում են նրանց, այդ «բախտախնդիր կործանիչնե-
րին» — նրանք լաւ գիտեն իրենց արածը և իրենց
անելիքը։ Ի՞նչ ունին կորցնելու — իրենց ստրկական շղթ-
անները միայն։ Եւ շարան-շարան գնում են պարտքի
հերոսները, գնում են դէպի արիւն, դէպի անխուսափելի

մահ: ճանճերի պէս կոտորուում են նրանք անգուշ ու անհաւասար կռիւների մէջ, հարիւրներով ընկնում են թշնամու ձեռքը, բայց կրկին հարիւրներով ասպարէզ են կոչուում, կրկին խանդ ու ոգեւորութիւն է տիրում յեղափոխական բանակի մէջ, ուր շարունակ տենդային պատրաստութիւններ են տեսնուում՝ աւելի ուժգին և աւելի լայն չափերով հարւածելու համար...

Թուում է թէ մի զարհուրելի վճռականութեամբ՝ ապստամբները որոշած են — դիպլոմատիայի յանցաւոր խաղերին վերջ դնելու համար — կանգ չառնել ոչ մի խոչընդոտի առջև, չխնայել անգամ եւրօպական ամենաբարձր շահերն ու հաստատութիւնները... Քիչ չեն գերազանց այդ Յուսահատութեան մէջ խիզախ թէօրիտիկոսներ, որոնք այդ մեթոդի մէջ են միայն տեսնում իրենց յաղթանակի ապահովագոյն գրաւակներ:

Ի՞նչ է անում եւրօպան: Ի՞նչ եղաւ ռուս-աւստրիական ռեֆորմների ծրագիրը. ինչով է զբաղւած Հիլմի փաշայի բարենորոգչական յանձնաժողովը: Հրդեհը բորբոքւում է օր առօր — իսկ այդ յուզիչ հարցումներին պատասխան չկայ տակաւին: Մակեդոնիան սպառնում է ընդհանուր ապստամբութիւն — իսկ այնտեղ դեռ ևս քայլ չէ արւած դէպի ռեֆորմ: Ազատւած քաղաքական բանտարկեալների տեղ՝ նորերն են ձերբակալուում ու պստորուում: Մի քանի վայրերի մէջ մի երկու քրիստոնեայ ժանդարմներ մտցնելով հանդերձ՝ թշնամին շարունակում է իր ահաբեկի ճնշումները: Ոչ մի լուրջ փոփոխութիւն: Լաւատես էինք, կարծելով թէ ծրագրւած ռեֆորմները անարգել կը գործադրւէին:

* * *

Մակեդոնիայի ճակատագիրը յանձնւած է առժամապէս Ռուսաստանին և Աւստրիային — երկու պետութիւններ, որոնք թէև առերևոյթս համաձայն՝ բայց իրօք ներշնչւած են փոխադարձ ծայրայեղ անվստահութեամբ, քանի որ հակամարտ շահեր ու ձգտումներ ունին տաճկական Արևելքում: Աւստրիան, որ վաղուց աչք է դրել Սալօնիկի վրայ, առայժմ իրեն պատրաստ չէ զգում՝ արշաւելու դէպի Մակեդոնիա, եթէ անգամ պատրաստ լինէր՝ իր դաշնակից Գերմանիան, Թիւրքիոյ հզօր հովանաւորը, չէր կարող լուռ հանդիսատես լինել Աւստրիայի յառաջխաղացութեան, Հաբսբուրգեան «*Drang nach Osten*»-ին, որը ոչինչ բարիք չէ խոստանում Գերմանիայի ռեալական քաղաքականութեանը: Ռուսաստանը ևս վաղաժամ է դիտում առայժմ ունէ քայլ դէպի իր բաղձալի նպատակը — Թիւրքիայի անդամատումը, որից նա սպասում է առիւծի բաժինը:

Ահա թէ ինչու թէ Պետերբուրգը և թէ Վիեննան լաւ են համարում պահպանել *statu quo*-ն, մինչև որ կը հասնէ լուրջ միջամտութեան համար պատեհ վայրկեանը:

Այնքան ծանր անցքեր տեղի ունեցան ռեֆորմների յայտարարումից իվեր — վայրենի արնառտները ոտքի կանգնեցին և քաջալերւած Ելլզըզ Բիօսկից՝ փորձեցին դիմադրել ռեֆորմների իրագործման, աւելի ևս, ցարի ներկայացուցիչը, հիւպատոս Շչերբինան, սպանեց Միտրօփիցայում՝ օրը ցերեկով ալբանների ձեռքով — ճրպիսի հարւած ռուսական հմայքին... Այդ լուրը ալեկոծեց քաղաքական աշխարհը. շատերն էին սպասում, որ Ռուսաստանը կը փոխէր իր դանդաղ ու երկչոտ ընթացքը, որ նա սաստկապէս վրէժխնդիր կը լինէր սուլթանի

կառավարութիւնից: Սակայն, իրերը շարունակեցին ընթանալ նախկին եղանակով. Պետերբուրգը ոչ միայն չպահանջեց մահաւան պատիժ սպանողի համար, այլև, չնայած Զինօվիեվի յորդորներին ու աղերսանքներին՝ չուզեց անգամ յարգել դեսպանի ինքնին անմեղ առաջարկը — թող տալ, որ սպանւած հիւպատոսի մարմինը Կ. Պօլիս բերելով միջոցին՝ կազմակերպէր Պերայում հանդիսաւոր յուզարկաւորութիւն... Ցարը դիւրութեամբ զննեց Համիդի խնդրանքին՝ թող չտալ, որ այդ տեսակ ցոյցերով վերաւորէր, գրգռէր իսլամ ժողովուրդը:

Ալբանիայի յուզումները մի պահ գրաւեցին ընդհանուր ուշադրութիւն, դարձան օրւայ հրատապ խնդիր: Նախագծւած ռեֆորմները ի կատար ածելու համար, անհրաժեշտ էր սանձահարել արնառտներին, անհրաժեշտ էր զինւած ուժ՝ Միտրօփիցայում: Ո՞վ պիտի ղեկէր այդ ուժը: Միտրօփիցան գտնւելով աւստրիական ազդեցութեան շրջանում՝ Վիեննայի կառավարութեան վրայ էր ընկնում այդ վայրը խաղաղացնելու պարտականութիւնը, եթէ Թիւրքիան ինքը ձեռք չառնէր ազդու միջոցներ: Իսկ Վիեննան շատ էլ յուզւած չէ երևում Ալբանիայի անցքերով, այն ինչ սուլթանի կառավարութիւնը թէպէտև Ռուսաստանի ճնշման տակ ուղարկում է բազմաթիւ զօրք դէպի խռովութիւնների վայրը, թէպէտև առերևոյթս սպառնում է ալբաններին, բայց իրօք քաջալերում ու թեւ է տալիս նրանց: Եւ նա ունի իր պատճառները:

Արնառտը նոյն դերն է խաղում եւրօպական Ցաճկաստանում, ինչ որ քիւրդը ասիականում. Ելլզըզը դաշնակցել է այդ վայրենի ու գիշատիչ տարրի հետ, որպէս զի դիւրութեամբ ստրկացնէ սերբ ու բուլղար գեաւուրներին, այլև տաճիկ ազատամիտներին: 1898 թւին թիւրք կառավարութիւնը իր սեփական հրացաններով զինեց բոլորալքան ցեղերը և բնացի այդ, յայտնի է, որ Ելլզըզի պահանջողը կազմում են այսօր ալբաններ: Վերջիններս էլ իհարկէ երախտամոռ չեն գտնուում, բանիցս նրանց պարագլուխները միաբան երգել են հաւատարիմ ծառայել փատիշահին և պաշտպանել «*ըրայա*»-ի դէմ Ցաճկաստանի ամբողջութիւնը:

Եւ այսօր ահա խաղացում է մի ուշադրաւ կատակերգութիւն, սուլթան Համիդ դուած է երկու կրակի մէջտեղ, կամ նա արտաքին ճնշման տակ զէնք պիտի բարձրացնէ արնառտների դէմ, որոնց մինչև օրս գուրգուրել ու հովանաւորել է, կամ թէ պարզապէս պիտի ըմբոստանայ պետութիւնների կամքի դէմ: Առաջին դէպքում նրան սպառնում է ալբանների զայրոյթը, որը կարող է փորձանք բերել նոյնիսկ իրեն, փատիշահին. Այդ պատճառով և Ելլզըզը անմեղ խնայողի չէ յարձակողական դիրք բռնել ալբանների վերաբերմամբ, չնայած ուժերի կենտրոնացման Ալբանիայում: Խոստումներ, ընծաներ, մեղմ յորդորներ ու սպանալիքներ, — ահա թէ ինչով են ձգտում հանդարտեցնել արնառտներին:

Տխուր է, շատ տխուր, դրութիւնը Մակեդոնիայում. Ապստամբական կռիւն ունեցաւ ադրէն ահարկու թափեր, արիւնը հոսեց քանդակներում ու դաշտերում, սակայն և այնպէս դեռ մինչև օրս էլ թէ տաճիկը և թէ Եւրօպան յամառում են իրենց դիրքի մէջ... Այնուամենայնիւ յուսահատւելու տեղիք չկայ. Մակեդոնիայի ճակատագիրը վերջին քննութեամբ գտնւում է դարձեալ մա-

կեդոնական կտրիճների ձեռքում, որոնք տակաւին հեռու են լքուկից և ընդունակ են դեռ շատ սոսկալի հարւածներ հասցնելու թշնամու գլխին: Պետութիւնները ուզեն-չուզեն՝ պէտք է միջամտեն լուրջ քաղաքական ռեֆորմներով, քանի որ ներկայ փոթորկալից վիճակում թէ իրենց շահերն են չարաչար տուժում և թէ միջազգային խաղաղութիւնն է վտանգւում:

Թ Ղ Թ Ա Կ Ց Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Ն Ա Մ Ա Կ Ն Ե Ր Վ Ա Ն Է Ն

I

22 Դեկտեմբեր, 1903

Յունւար 4-ի շաբաթ գիշեր լոյս կիրակի, գիշերւան ժամը 8-ին, երբ տղաքը դեռ նոր պառկած էին, Վարդգէսը շշուկ մը լսելով վեր կ'ելնէ և կը տեսնէ որ պարտէզին մէջ, ծառերուն տակ, մարդեր թագնւած կըսպասեն: Ձայն կուտայ ընկերներուն՝ «տղաք, վեր կացէք, պաշարած ենք»: Ընկերները կէս հագնած դուրս կը վազեն կը տեսնեն որ իրենց դիմացի տանիքն ալ մարդեր կ'եցած են: Տղաքը դէպի փողոցի դուռը կը վազեն, դուռը կը բանան և կըսկսին կուլի, տունէն դուրս գալու նպատակով: Վարդգէսը և իր ընկերներէն մէկը ոտքերէն կը վերաւորին, բաւական կուլիէ վերջ կը տեսնեն որ անկարելի է տունէն դուրս գալ, ետ կը դառնան որ պարտէզի դռնէն փախչին, բայց թշնամին այդ կողմի տուններն ալ բռնած ըլլալով՝ տանիք կը բարձրանան, հոնկէ ելք մը գտնելու համար Դժբախտաբար իրենց տունը անջատ ըլլալով՝ գրացի տանիքը անցնելու համար նեղ փողոցի մը վրայէն պէտք էր ցատքեր: Ընկերները յաջողութեամբ կը գործեն այդ ոստումը, բայց Վարդգէսը ոտքէն ծանրապէս վերաւորւած ըլլալով՝ ցատքերու միջոցին փողոց կ'իյնայ ու կը մարի: Ընկերները կ'անցնին կերթան, իսկ ինք արիւնաբամ ու ուշաթափ՝ չգիտցելի ո՞րչափ ժամանակ՝ այդ խուկ փողոցին մէջ մնալէ ետքը, վերջապէս կըսթափի և քաշկուտելով մօտակայ տան մը պարտէզը կը մտնէ: Տանտէրը՝ կէս խելագար մարդ մը՝ հազիւ հազ կը համուկ ընդունիլ ու պահել զինքը: Յաջորդ առաւօտ ոստիկանութիւնը խուզարկութիւն կատարելով՝ ձիւնին վրայ արիւնի հետքեր կը գտնէ և այդ հետքերը բռնելով կերթայ ուղղակի յիշեալ տան դուռը կը զարնէ: Տանտէրը հայհոյանքներով կը մերժէ դուռը բանալ, Վարդգէսը պատուհանէն ոստիկաններու հետ խօսելէ ետքը՝ հակառակ ոստիկանապետի կեղծ ու պատիւ յորդորներուն ու խոստումներուն՝ նախ չի ուզեր անձնատուր ըլլալ, ձեռքը ճակտին բաւական կը մտածէ, սակայն իր ուժասպառ վիճակին մէջ երկար դիմադրութիւն մը անկարելի և թաղին անպաշտպան բնակիչներուն համար աղետալի գտնելով՝ վերջապէս դուռը բանալ կուտայ: Դեռ պահ մը առաջ պատուհանին տակ անուշ լեզու թափող շունները ներս խուժելուն պէս կը յարձակին անկարող վերաւորին վրայ ու կըսկսին անգթաբար ծեծել: Յետոյ մարդու մը շալակը տալով՝ մինչև կուսակալի տան դրան առջև կը տանին զինք և կիսամեռ վիճակի մէջ ձիւնի վրայ կը նետեն: Գոմիսէր Հիւսնին և իր տղան վրայ հասնելով՝ հող ալ բարբարոս ծեծ մը կըսկսին, սակայն կուսակալը պատուհանը բանալով «Լիրբեր, ի՞նչ կուզէք կիսամեռ մարդէն», կը պոռայ և

կը հրամայէ որ ներս առնեն վերաւորը: Կուսակալի տան մէջ օր մը մնալէ ետքը՝ կը փոխադրեն բանտը, ուր առանձին սենեակի մը մէջ փակած՝ կ'աշխատին վերքերը բուժել: Հարցաքննութեան համար պատգարակով կը տանին կը բերեն զինքը: Իրեն վրայէն բռնած են երկու ատրճանակներ, մէկը մաուզէր և միւսը Սմիտ Վէսսըն՝ հանդերձ փամփուշտներով:

II

2 մարտ

Անցեալ տարի օգոստոս 20-ին տեղս տուն մը խուզարկեց և այդ խուզարկութեան պատճառով տան տղաքները որ երեք եղբայրներ էին, փախստական եղան, թէև ոչինչ յանցանք չունէին: Այս տարի փետրուար 9-ին այդ տունը նորէն խուզարկեցին, տղաքներէն մէկը տան մէջ կըլլայ: Երբ կը տեսնէ որ տունը կը պաշարեն՝ կը փախչի կերթայ այգիի պատին տակ կը պահուի. ոստիկանները տուն մտած ատեն այգիի մէջ, ձիւնի վրայ ոտքի հետք կը նկատեն և այդ հետքը բռնած կերթան կը գտնեն տղան ու կըսկսին ծեծել: Տրացանի կոթով գլուխը մէկ քանի տեղով կը կոտորեն և քաշքշելով կը բերեն տուն, կը ձգեն բակի մէջ, նորէն կը ծեծեն: Մայրը և քոյրերը կերթան պաշտպանութեան, կը խնդրեն որ գէթ չծեծեն, կը թողնեն տղան և կըսկսին մօրը և մէկ աղջկան ծեծել: Կը ձգեն գետին ու հրացանի կոթերով անգթաբար կը հարւածեն, չեն նայիր ոչ աչք, ոչ գլուխ, երկու հրացանի կը ջարդեն մօր ու աղջկայ վրայ, այնպէս որ շնչասպառ կը ձգեն: Այդտեղ գտնւած է և հայ գոմիսէր մը՝ Մկրտիչ Էֆէնտին, որի գուլթը հազիւ հազ կը շարժի և ձեռքերէն կ'առնէ դիակ դարձած մայրն ու աղջկը: Տունը կը կողոպտեն, սնտուկները կը կոտորեն և մէջը եղած զգեստներն ու կանանց արծաթէ զարդերը կ'առնեն: Տան մէջ կը թողնեն երկու խեղճ, անպաշտպան կիներ ու աղջիկը կիսամեռ վիճակի մէջ, իսկ տղան բանտ կը տանեն... Ո՞վ պիտի հարցնէ, փնտրէ, թէ ինչեր կը կատարին երկրի մէջ. ասոնք տեղի կունենան եւրօպական ներկայացուցիչներու աչքերուն առջևը... կը տեսնեն և կը լռեն:

Երկրի դուռիւնը վատթարացաւ. նորէն խուզարկութեան ձայն կայ. թիւրքեր և քիւրդեր՝ ամէնքն ալ պատրաստած կըսպասեն, որ յարձակին հայերուն վրայ և կողոպտեն. մեզի կ'ըսեն. «անհաւատներ, գարնան ձեզ բոլորիդ պիտի կոտորենք»: Ժողովուրդը վախի մէջ է և չգիտէ ինչ ընէ:

III

8 մարտ

Երկար ժամանակէ ի վեր կառավարութիւնը կ'աշխատէր ձեռք բերել Վարդգէսը, բայց անյաջող ելան իր փորձերը: Վերջերս ճարահատեալ դիմեց իր սովորական միջոցներուն, ձեռք առաւ անարժան հայ Սէմէրճեան խաչիկը, կաշառեց նրան 30 ոսկիով, որպէս զի Վարդգէսը իրեն յանձնէ: Երկար աշխատելէ վերջը յաջողեցաւ հասնիլ իր չար նպատակին, — Վարդգէսը ձերբակալւած է: Մատնիչը և իր ընկերները մեծ ցնծութեան մէջ էին: Մատնութենէն քանի մը օր յետոյ նոր վերադառնալով շինեց, փառաւոր կերպով հագնւեցաւ... Կառավարութիւնը յանձնեց իրեն ատրճանակ մը իր կեանքի պաշտպանութեան համար, ալ ապահով էր: Կառավարութիւնը

իրեն պաշտպան, ատրճանակը մէջքը՝ ալ ո՛վ կարող էր մօտենալ: Ամէն օր իր եղբայրներուն հետ թեւթեւի տւած՝ կը խօսէին, կը խնդային. . . Կառավարութիւնը պահանջներ էր, որ մեր ընկեր վարդանն ալ իրեն յանձնէր. մատնիչը սիրով ընդունած և 4 օր ժամանակ ուզած էր: Երկրորդ օրը արդարութեան դաշտը միւսեցաւ մատնիչի սրտին մէջ: Խեղճ մարդ, փափագը սիրտը մնաց. . . Տասներկու դաշտին հարւած և մի գնդակ հետը տարաւ: Տեւօրը կատարեց հրապարակի վրայ չորս ճանապարհներ ձգեց:

Խաչիկը սուլթանի ամենահաւատարիմ հպատակներէն մէկն էր եղած. խոստացեր էր վանի մէջ յեղափոխականները մատնել և յեղափոխութիւնը կործանել: Այդ մտքով ցուցակ մը կազմած էր և ներկայացուցած էր կառավարութեան: Վարդգէսը բռնել տալուց քանի մը օր վերջը, կը պատրաստէր տունը փոխադրել տաճկաց թաղը, ո՛վ գիտէ թերեւս հախ դիւն ընդունելու: Անցաքիր ալ առեր էր, որ երթայ Կ. Պօլիս պաշտօն ու պատուանշան ստանայ, ափսոս որ անցագիրը սխալ էր առած: Կառավարութիւնը 70 դահեկան ամսական կապեց Խաչիկի կնկան. իր պաշտօնեաները և զօրքերը ամսականի երես չեն տեսներ, հայի կնկան 70 դահեկան ամսական կը կապէ. . .

Սէմերճեանի ընկերը, Չալղատարնց Հաճի Մանուկ, որ Խաչիկի սիրելի ընկերն էր, նոյն օրը միասին կ'ըլլան, երբ սպանութեան փորձը կը կատարէր, մէկ անգամ փորձ կ'ընէ ազատելու իր ընկերը. մեր քաջը վեր կը կենայ, ծնկները դրած իր որսի կուրծքին, և դաշտին հարւած մը կուտայ անոր, բայց չի հասնիր նպատակին. նա կը փախչի և կերթայ լուր տալու պահանջը: Ձինքը կը բռնեն և կը հարցնեն, թէ ո՛վ էր սպանողը. վախէն չի կարող ըսել, թէ այս ինչ մարդն է: Կառավարութիւնը խիստ չարչարանքի կ'ենթարկէ զայն, թէ «դու գիտես ու չես ըսեր», բայց նա աւելի լաւ կը համարէ կառավարութեան պատիժը, քան թէ յեղափոխականի վրէժխնդրութիւնը: Այժմ պառկած է բանտին մէջ:

Այս տարի պարիամին ամսականներու տեղը կառավարութիւնը գարի բաժնեց զօրքերուն: Յունուար ամսի 10-ին յիսունի չափ հեծեալզօրքեր իրենց գէնքերն ու ձիերը առնելով փախան: Կառավարութիւնը զօրք ուղարկեց անոնց ետեւէն, յետ դարձուց և բերեց բերդին մէջ բանտարկեց: Կը հարցնէ թէ ինչո՞ւ կը փախչիք, ի՞նչ կ'ուզէք, կ'ըսեն որ մեզ ամսական չկայ, հագուստ չկայ, մեր ժամանակը լրացեր է, մեր արձակման թուղթը չէք տար, ի՞նչ պէտք է ընենք, իհարկէ պիտի փախչինք:

Փետրուար ամսի 11-ին 80 հեծեալզօրք նմանապէս փախան, կառավարութիւնը պուկալակի ամսալ նախընթաց պէս ցուպը ձեռքին գիշեր-ցերեկ կը սպասէ քաղաքին շուրջը: Այս փախած զօրքերը ճանապարհին, քաղաքէն դուրս, կը պատահին Կիրաշէնցի ուսին, որ գիւղից հաւաքած 7 ոսկի տուրքը կը տանէր կառավարութեան յանձնելու, կը բռնեն կը կողոպտեն: Պատահած գիւղերու մէջ կը կողոպտեն, կը ծեծեն, կը բռնաբարեն: Կանցնին Արձէշ այն տեղերն ալ կը շարունակեն իրենց կողոպուտները. ազատ, համարձակ իրենց արածը կ'ընեն. կառավարութիւնը ձայն չի հաներ, որպէս զի այդպիսով սիրաշահէ և յետ դարձնէ զանոնք:

Ն Ա Մ Ա Կ Բ Ա Ս Ե Ն Ե Ն

26 փետրուար, 1903

Անցեալ նամակներէցս յայտնի է ձեզ, որ տեղական թիւրք և հայ ժողովուրդները ներկայացուցիչներ էին ուղարկել՝ քրդերի չարութիւնների մասին բողոքելու, արդարութիւն աղերսելու: Պէտք բողոքող հայերը լինէին միայն, նախկին տարիների նման, կառավարութիւնը յեղափոխական սեպարատիստների դաւ համարելով, խեղճերի արցունքը կ'արհամարէր և մեծաւորի առաջ երեսը գետին քսող մերկ ու թշուառ գիւղացուն ձեռնունայն ետ կը դարձնէր. այժմ թիւրքերն էլ մեզ հետ են, կառավարութիւնը կասկած չի տանի, այսպէս էր ասում Բասենում յայտնի թրքասէր մի հայ, դէպի որը դարձած վարանոտ հայեացքները կարծես ասում էին՝ «երանի թէ այդպէս լինէր», և թիւրք ու հայ խառնած գնացին իրենց վերքերին դարման խնդրելու. թիւրքը իր արենակից ու կրօնակից եղբոր մօտ էր գնում. շլինքը ծռած՝ հայը քայլում էր նրա յետեւից, մէկ արնախումբի միւսին էր գնում գանգատելու: Օգը ցնդած հազարաւոր «գուցէ»-ներին մէկն էլ աւելացրեց ու գնաց, մարած յոյսի մի փոքրիկ, աննշան կայծ սրտում, ամէն տեղից յոյսը կտրած հայը մի անգամ էլ փորձել ուզեց իր բախտը վիճակակից թիւրքի հետ: Հեռագիրների մի շարք տեղացին Երզնկայի միւշիւրին (4-րդ զօրաբանակի հրամանատար Զէքի փաշայ) և Կարնոյ կուսակալի միջոցով ստացան հազարաւոր անգամ սուտ հուշակած պատասխանը. «վերահասու կը լինենք ձեր վիճակին»: Հայերը յետ դարձան կրկին շլինքները ծռու, քրդերի վրէժխնդրութեան ահը սրտներում, բայց թիւրքերը դադար չառան. գարնան շատ հաւանական յարձակումների դէմ ազատ գործելու համար մի փորձ ևս պատրաստում են անելու, պատրաստել են մի աղերսագիր սուլթանի անունով, որով աղաչում են իրենց դառն վիճակին մի դարման, հաւանակ դէպքում իրենց պատասխանատու չեն համարում ունէ խառնակութեան. թշուառները յոյս ունին, թէ Երզնկայի ճիւղի տւած թէկուզ մարդասէր հրամանը կարող է արձագանք գտնել տաճկական ոտից մինչև գլուխ կեղտի մէջ խրւած պազշոտ ու ընչաքաղց պաշտօնեաների կողմից:

Իսկ քիւրդը անխռով շատ հանգիստ կերպով շարունակում է իր թալանն ու բռնութիւնները, սպառնալով վրէժ լուծել իր դէմ բողոք տուողներից: Թիւրքերն ու հայերը շատ լաւ գիտեն, որ գարնան հետ իրենց համար սև օր պիտի լուսանայ. աւելի անտանելի է հայի վիճակը, զուրկ ինքնապաշտպանութեան ունէ իրաւունքից ու միջոցից՝ նա բախտի խաղին է թողել իր ճակատագրի որոշելը ու սպասում է գարնան. . . Ո՛վ օգնութեան կը գայ նրան, ինքն էլ չգիտէ: Արդեօք երկաթ պիտի սպասէ դրսի օգնութեան. կառավարութիւնը՝ խուլ այս բոլորի վերաբերմամբ՝ քրդերին օրէցօր աչքաթող է անում, շատ դէպքերում էլ գաղտնի խրախուսում: Զուկցիների ցեղապետ Ղուլի խանը, որի համար մահաւան վճիռ էր տրւած, անցեալ աշնան տարւեց Կարին և համիդիէ գրւելով, ոչ միայն ազատեց, այլև գայմագամի պաշտօն ստացաւ: Հասնանցիներու ցեղապետ յայտնի արնախումբ Բըզախ աղան, օրերս Բասենով միւշիւրի մօտ տարւեց. միամիտներն ասում են, որ պիտի կախեն, իսկ նման տասնեակ օրինակներ աեսնողին պարզ յայտնի է, որ

պարզեցնելու համար յետ կը դառնայ հայերին ջնջելու խոստում տալով կառավարութեան. նրա հետ ցնացող զինուորներից մէկին հայերը հարցրին, «ինչո՞ւ էք տանում», ասաց, թէ «միշտի դրամը պակսել, դրա համար կանչել է»։ Զուրը կը տանի բուլանխոուն գարնանը ըրգախի դառնալուց յետոյ... Դարման, դարման, ընկերներ, այս սև վիճակին, գէթ մենք գոտեպնդենք արագութեամբ՝ դէպի կորուստ ցնացող ժողովրդին փրկելու։

* * *

Ստորեւ գրած հայատառ թիւերը են հեռագրից ուղարկւած է 3 օրինակ. մէկը սուլթանին, միւսը մեծ վեզիրին, երրորդը սարապէրին (զինուոր. նախարար)։ Երեքի տիտղոսներն էլ յիշած են թիւերը հեռագրի ճակատին։

Էջրատ վէ աշտիւրէ մէնսուր, էսլիա իլէ միւսալլա՝ էշխասը միւզիրէնին թէատտիսթը վաքըս վէ ճինայէթի միւթէատտիսթէրի պիր գարիյէտէն տիկէրինէ կէտիլէ-մէյէճէք ըատտէտէ սէլպի էմիլիէթ էթտիկինէ վէ գէմանը զիրաաթ թէգարուպ էյլէտիկի ջիհէթլէ հէրասէթտէն մահրում գալորգտան պաշգա հայվանաթը զիրայիէ վէ մէվաշմըգտան տախի գաթը իւմիտ էտէրէք ըրգ ու նամուսուսուգուն մուհաֆազասը չարէսինէ պագաճաղըմըգա մէպիի մագհարը էտալէթ պուրուլմագըղըմըգ իւչ զըթա թէլէկրաֆլա իսթիրան էտիլմիշ իսէտէ հալէա պիր սէմէրէ կէօրիլէմէտի իշ մէրճիլինին ըյլինէ պրապըլըյօր։ Հալը աճիլիթիմալը մէմիլէքիանէմիլ չաղարը մէրհա-մէթլէ թէլագըր պուրուլմագսա էշխասը միւզիրէի մարուզէնին թէսալլիլթէրի թագէթի պէշէրիյէնին խարի-ճինէ չըգաճաղընտան իճրայը իճապը տէօրտիւնճիւս տէֆա ցլարաք միւսթէտատըր ֆէրման»։

Հայերէն թարգմանութիւնը.

«Քիւրդերու եւ աշիրէթներու յատուկ զէնքերով զինւած կարգ մը չարագործներու իզորժ դրած հարստա-հարութիւններու եւ բազմաթիւ եղեռնագործութեանց հետեւանօք՝ մէկ զիւղէն միւսը գնալ անհնարին դառնալու աստիճան ապահովութիւնը վերցւած է. երկրամէկու-թեան ժամանակը մօտեցած, բայց աշխատելէ զրկւած եւ մշակութեան յատուկ մեր անասունները եւ մեր հօտերը երեսի վրայ թողած՝ մեր պատուոյն պաշտպանութեան միջոցներուն վրայ խորհելու ստիպւած ենք։ Երեք անգամ հեռագիր ուղղելով խնդրած ենք որ արդարութեան արժա-նանանք, բայց ցարդ արդիւնք մը չտեսանք եւ գործը զրկւեցաւ պատկանած իշխանութեան։ Մեր խղճալի վիճակը եթէ նկատողութեան չառնել եւ չըսուրէի նոյն չարագործներու բռնութիւնները անտանելի եւ ան-հանդուրժելի չափեր պիտի ստանան, ուստի հարկ եղած միջոցներուն անմիջական գործադրութիւնը չորրորդ անգամ ըլլալով կ'աղերսենք հրաման»։

Ստորագրել են՝ Իւզլէրան, Գոմաձոր, Քէօփրիքէօյ, Հէգէբատ, Էաղան, Իշխն, Թօտվերան, Քրդաբազ, Թոր-թան, Ալվար, Հիրթի հայ գիւղերի քէհեաններն ու գլխաւորները և Արդի, Դեօլլագ, Չամուլու, Ամրագոմ, Մինտկուան, Ամսեանջա, Օգոմի, Քեափանագ, Իգիջագրէգ, Թոտի գիւղերը և Թարխոնջա, Պատիժուան թրքախառն հայ գիւղերը և խփել են կնիքներ։

Քայլն արդէն արւած է, սպասում են հետեւանքի։ Կառավարութեան կողմէ արւած պաշտպանել իր հպա-տակներին. եթէ անցած չլինէր հրաշքների դարը, գուցէ հաւատարիք հեռագրի բարերար հետեւանքին, բայց սա Տաճկաստան է, ներկայ դարու վայրենութեան ու մարդա-կերութեան ամենաարիւնոտ դրամների դժոխքը։ Քիւրդը աներկիւղ, կրկնակի կատաղութեամբ կը շարունակէ իր վայրագութիւնները, իսկ եւրոպէի բռնակալի անպատիւ գործիքները կը յայտարարեն, իր անտարբերութեամբ

մարդասպանին մեղսակից դիւանագիտական Եւրոպային, իրենց ճնշւած, տանջւած, ուժասպառ հպատակների բարօրութեան մասին։ Մենք չգիտենք՝ կը հասնին հեռա-գիրները իրենց հասցէին, բայց համոզւած ենք, որ դրանից օգուտ չկայ մեզ. մեր միակ յոյսը մեր վրայ է և այլա-դաւան տարրերի ընդհանուր դժգոհութիւնը, տանջանքի խաչի տակ տնքոց հանող հայի մէջ մի քանի աստիճան բարձրացնում է միայն արիւնոտ պայքարի տրամադրու-թիւնը. մեր միակ մխիթարութիւնն է այս...

* * *

Նախկին նամակներիցս մէկում յիշատակել էի Բատլիցի աշիրէթի ցեղապետ Աղաբագի մասին, որ իր ապօրինի արարքների համար կանչւել էր Երզնկայ պատժելու... Սպասում էինք. նրա մասին մահւան լուրեր տարածեցին։ Բայց ահա յանկարծ մի օր լսեցինք, որ Աղաբագը գալիս է։ Արնախումը աւելի է երես առել. մահւան միակ արդար պատժի արժանի մարդասպանին ընդ առաջ էին եկել հարիւրի չափ ձիաւորներ, որոնք խրախուսւած իրենց տիրոջ ազատ վերագարձից՝ ոտնատակ էին տալիս հայ գիւղերը՝ Դալիբաբա, Իւզլէրան, Գոմաձոր և 2 թրքական գիւղեր՝ Մինդուլուան ու Ամրագոմ։ Ստիպում էին եզները արձակելու իրենց ձիերը կապել, սովորականից աւելի հայհոյում, պահանջներ էին անում խանութներից ուժով ապրանք էին առնում ու չէին վճարում և այդ բոլորի վրայ աւելացնում ծեծ և սպառնալիք՝ թէ «ոտսէք գարնանը ձեզի ի՞նչ կ'անենք»։ Հայի թալանից գոյացած ոսկիներով նրանք կուրացրել են կառավարութեան վախկոտ ու գող պաշտօնեաներին և այսօր իրենց մեծի հետ յայտարարում են գարնանը անելիքների մասին աներկիւղ։ Կառավարութիւնը խուլ գտնւեց դէպի ժո-ղովրդի աղերսանքը, և քիւրդը աւելի ևս կատաղեց։ Աղերսանքի օրերին արնախումը ազատ զգաց իր ձեռքը։ Մէկ մարդասպանին հետեւեց միւսը և ըրգախի ոսկիներն էլ գնացին տաճիկ մեծաւորների անյատակ սնտուկները լեցնելու. ո՞վ գիտէ ի՞նչ արնագաւ հրահանգներ պիտի բերէ իր հետ։ Գալիք աղէտների մասին ամէն կասկած վերացաւ, երբ հաստատ աղբիւրից տեղեկացանք, որ գարնան բոլոր աշիրէթները պիտի գումարւին Մուշ։ Եթէ նրանց մի տեղ գումարւիլը ամենաանմեղ նպատակ անգամ ունենայ, այս մէկը մեզ համար շատ պարզ է, որ դաշտեցիների գլխին մի պատուհաս պիտի պայթի... Բայց մենք տեղեկացանք, որ իբր թէ ջան-ֆէդայիների համար են գնում նրանք. ծայրայեղօրէն միամիտ պէտք է լինել չհասկանալու համար գաղտնի տրւած հրահանգի նպատակը։ Անցեալ տարի Փրանսիական գործակալի երեւան գալը Մուշում, ժողովրդին ազատեց մի ծանր պատուհասից, արդեօք այս տարի ևս նոյնը կը լինի. և եթէ մինչև անգամ՝ մշեցիք ազատին գալիք պատուհասէն, ի՞նչ պիտի անեն բասենցիք, ալաշկերտցիք, խնուսցիք...

Ն Ա Մ Ա Կ Ե Ր Զ Ն Կ Ա Յ Է Ն

23 մարտ, 1903

Տառապանք տառապանաց է հային ճակատագիրը. կարծես սև օրեր անցնելու դապապարտւած է նա միշտ... Երկրին կացութիւնը նիւթապէս թէ բարոյապէս օր օրի աւելի կը վատթարանայ. չգիտենք, թէ այսպէս ո՛ւր

պիտի յանգի... Հայրենիքի ամէն կողմը աւար ու թալան, արիւնհեղուծիւն և առեւանգում,—ասոնք յաւիտենական յանկերգի մը պէս կը տաղեն ամէն օր մեր ականջներին...

Իրաց այս վիճակէն դուրս ներկայ տարւայ շրջանին պարտքերու հաւաքման եղանակը փոխելուն հետ՝ ճնշողական ծրագիրն ալ իր բարդեալ յօդաւորները ունեցաւ, տուրքի հաւաքումը ըսելով միայն թալան հասկնալու է և ոչ ուրիշ բան. ամէն կողմ խայտառակութիւն խայտառակութեանց, ծեծ, բանտ, կռիւ և այլն. կառավարութեան զինուորն ու ժանտարմը լոյս օր է տեսեր. խումբ խումբ կը շրջին հայ գիւղերը, պատակաւ կեր, խումբ և բարբարոսի քմահաճոյքներ. քանի մը տարւայ յետեւալ տուրքերը մեկանց կը պահանջեն և անպատճառ պիտի առնեն. տան կահ-կարասի մինչև վերջին անկողինը, անասուն և ին.—բոլորն ալ անխնայ ի վաճառ կը հանին, որի հոգն է հայի ապագան կամ սովամահ կորսնելու երկիւղը,—ասոնց բոլորի օրինակներն ու փորձերը տեսանք յանձին ամբողջ հայաբնակ գիւղերու և նոյնիսկ քաղաքին վրայ. Ամէն կողմէ աղերս, ամէն կողմէ բողբոջ գէպի ազգային առաջնորդարան՝ իրաց այս վիճակին դարման մը տարւելու, բայց ոչինչ արդիւնք. Բաղաբիս միւթէսարի՞ փաշան բացարձակ յայտարարած է որ «բարձրագոյն հրամանները միայն կը կատարենք, մենք ինքնին հեղինակութիւն չունինք»։ Ղուրպան պայրամի առթիւ կառավարական անտուկը հայ մի քանի վաճառականներէ 61 օսմ. լիբայի փոխառութիւն ըրած է ամսական վճարելու համար. ի՞նչ անկում...։

Ի լրումն չարեաց՝ այս օրերս ընդհանուր քարդի մը շշուկը կը պտտի դարձեալ ժողովրդի ամէն խաւերու մէջ. կ'ըսէի թէ մեծ դահիճը դարձեալ հրաման ըրած է հայերը կոտորելու։ Ամէն կողմ ահ ու սարսափ կը տիրէ, 95-96 թվականներու փորձը աչքերնուս առջև է. դժբախտ ժողովուրդ. ուրկից որ հով մը փչէ, հակահարւածը հայի գլխին է... Մակեդոնիան կը յեղափոխուի, այնտեղի ժողովուրդը կը քարդէի մեզ բախտակցելու համար. մենք ևս զերծ չենք մնար զայն հարւածող սուլիի հարւածներէն։ Ռուսիան պահանջումներ կ'ընէ թիւրքիայէն. ի պատասխան՝ սա մեզ քարդէիւ կը պատրաստուի։ Եւրոպական պետութիւններէն մին կամ միւսը ծրագիր մը կ'առաջարկէ,—դարձեալ հայերը բնաջինջ ընելու սպառնալիքը կը լսի ամէն տեղ. կարծես թէ մենք ըլլայինք ամէն խնդրի ակն ու աղբիւրը, կամ ամէն պետութեանց պահանջներուն հեղինակողը...

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր Ս Ղ Ե Ր Դ Ի

(Շարունակութիւն № 2-ի)

8 նոյեմբեր, 1902

Յ ու լ ի ս 5. — Օր մ'առաջ Իտարէի մէջ նստած ատեն Սղերդի քաղաքապետ Համէ Էֆէնտին՝ բանակուի մը կ'ունենայ Նագիպ Սէյտ Ալիի հետ։ Ասոր համար Ասսիէական (Սղերդի էշգըյաններու պետը) զինեալ ուրիշ երիտասարդի մը հետ, կառավարական պաշտօնատան դուռը կըսպասէ պահ մը և երբ քաղաքապետը կ'անցնի, գառագեղէն փախած առիւծի պէս վրան կը յարձակի, կաւատ, շնացող, բիճ և ին անշուր անարգանք-

ներու տեղատարափ մը թափելով գլխուն, առանց բնաւ ակնածելու կամ վախնալու զինք շրջապատող պաշտօնեաներէն, որոց ալ և նոյնիսկ սուլթանին, ուղղակի կամ անուղղակի, այդ յիշոց-նախատինքներէն բաժին հանել մոռցած չէր և Վայն ալ խոշոր տեսակէն։ Զը մոռնալք յայտնել որ այնքան պաշտօնեաներէն ու ոստիկան-զինուորներէն և ոչ մին կրցաւ էշգըյանի մէկ մազին դպել կամ արգելքի տակ առնել զայն, գոնէ ի խրատ այլոց։ Տեսա՞ր հեղինակութիւնը մեր կառավարութեան։

Յ ու լ ի ս 11. — Պըրքէ Տօուար անուն ասորի երիտասարդին գեղանի կինը կ'առեւանգուի Բիւզըքի մէջ, նոյն գեղի աղային ծառան Ազիզի ձեռքով։ Վեց օր պտտեցնելէ, պղծելէ և չարչրկելէ յետոյ, Սղերդ կը բերէ տաճկցիներու, կինը սակայն չտաճկնալուն, յանձնեցաւ էրկանը։

Յ ու լ ի ս 27-ին, գիշեր, Ալըքան աշիւթէն խումբ մը չարագործներ կը յարձակին Ռնտվան գիւղին նախիրին վրայ և հրացանի գնդակով կը վիրաւորեն նախորդ Պողոսը, որուն վիճակը ծանր և յուսահատական է։

Յ ու լ ի ս 8. — Սղերդի Տէի ճամբուն վրայ մի քանի հայեր կը կողոպտուին։ Վաճառան աշիւթէն 7-ը զինեալ չարագործներու կողմէն։

Յ ու լ ի ս 9-ին գիշերը Պշար աղան մի քանի զինեալ ընկերներով Նիւզէլտէրա գիւղը կերթայ և Փանոսեան Պէշիէին ձին բռնի կ'առնէ։

Յ ու լ ի ս 12-ին Սղերդէն 5 ժամ հեռու Թէլան անուն գիւղի մօտերը մի քանի չարագործ քիւրդեր կը կողոպտեն Սղերդցի հայերէն Ղուկաս և իր ընկերը։

Յ ու լ ի ս 14-ին զինուոր Պէյրամ չափուշ տէհցի Սողոմոնէն իր ունեցած երեւակայական (40 մէճիտ) պահանջքին համար գիւղին մէջ ընդհանուր վիժուկ մը կը ձգէ, ամէն կողմ ու ամէն տուն խուզարկութիւններ կ'ընէ և վերջապէս դրամը կ'առնէ՝ ամէն տեսակ խոգժութիւն ի գործ գնելով յիշեալ ազգային պարագաներու վրայ։ Յիշեալն, մայրը և երկու եղբայրները իրենց վախէն գիշերով կը փախչին Սղերդ, ուր միջոց մը կը մնան մինչև չափուշին Տէհ մեկնումը։

Յ ու լ ի ս 21. — Տեղույս զինուորական բժիշկ փոխ-հազարապետ Գատրի Էֆէնտին մի քանի բարեկամներով մօտակայ կաթողիկոս վանքը կերթայ զբօսնելու։ Երբ իրենց օղին կը լմնայ, այնտեղէն անցնող Սողոմոն անուն հայ երիտասարդ մը քաղաք կը զրկեն։ Խեղճ հայուն վերադարձին, ճամբան, մի քանի թիւրքեր վրան կը յարձակին, կը վիրաւորեն, ունեցած 7 մէճիտը կ'առնեն։ Երիտասարդը սաստիկ կերպով գանակոծւելէ յետոյ կը փախչի։ Բայց այս անգամ երկու զինուորական ետեւէն կը հասնին և իրենք ալ իրենց կարգին կուշտ մը կը ծեծեն ու ձերբակալելով բանտ կը յանձնեն, պատրաստ կելով թէ թիւրք մը վիրաւորած է։ Բուն խնդիրը սա է, որ թիւրքերուն հետ ծեծկած միջոցին անոնցմէ միոյն թեւը վիրաւորած է ընկերին ձեռքի խթանովը։

Յ ու լ ի ս 23-ին տեղիս սպանդանոցին մէջ երկու զօրք քէյֆի համար թովմաս անուն հայ պատանին հրապարակաւ կը պարտաւորեցնեն քոստո քած մը կ'ընելու։ Ըսելը այս անսովոր երևոյթէն կատարելով՝ կը յօշոտէ տղուն ազգրին միսերը։

Յ ու լ ի ս 28-ին տեղէս 2 ժամ հեռի Այնպարան (25 տնւոր) և Ճուանիկ (150 տնւոր) քրդաբնակ դրացի երկու գիւղերու բնակիչները ընդհարում մը ունեցան միմեանց հետ։ Երեք վիրաւոր՝ ծանր տեսակէն։ Թէև

կառավարութիւնը փութաց խնդիրը քննելու, բայց ոչ որ կրցաւ ձեռքակալել:

Յուլիս 29-ին բնիկ թըլօցի և տեղս հաստատող շէյխ Խալիլի կինը կ'առեանգուի Շէյխ-խալաւ թաղեցի-ներէն Էօմէրի կողմէ: Շէյխն, որ դիւրագրգիռ բնոյթի տէր է, կը կատարէ, կը զայրանայ, կը փրփրի և շուկայի հրապարակին վրայ տեղական կառավարութեան, թա-գաւորին, կրօնքին, մարգարէին բիւր լուտանքներ կ'ուղղէ ի լուր ամենեցուն և նոյնիսկ կըսպառնայ սև թաշկինակ կապել (քահանայ ըլլալ) ի նախատինս իսլամական կրօնքին, բայց ամէն սպառնալիք ապարդիւն կ'անցնի. կինը վերջնապէս ձեռքէն ելած է:

Օգոստոս 20.—Այսօր տըհեցի Սարգիս Խաչի-կեանի հնձաժ ցորենի շեղջերը (60 քիլէնոց) կ'այրւին անծանօթ չարագործներու կողմէ, գիւղէն մէկ ժամ հեռու:

Օգոստոս 21.—Զինուորական մը որ վերոյիշեալ (օգոստ. 20) ազգայինի ախոռին մէջ իր զօրապետին երկու ձիերը պահելու պաշտօնն ունէր, ծեծի տակ կը մեռնէ տանտէրին 400 զուրուշնոց եզ մը: Զօրապետը հայուն ախոռը իր ձիերուն յատկացուցած, չի թողոր որ տէրը անասուն պահէ հոգ:

Օգոստոս 22-ին գողերը գիշերով կը մտնեն Յովսէփ Գասպարեանի տունը. դուռը չկրնալով բանալ, տանիքի վրայ գտածնին կը տանեն՝ 1 բրդէ վերմակ, 1 օխա տան կտաւ, 1 քրդական շալվար և մէկ ձեռք էրիկ մարդու զգեստ, ամէնը 250 զըշ. արժողութեամբ. տանտէրը աղքատ մըն է:

Օգոստ. 23.—Այսօր Անայ անգլիական հիւպատոսը Տհէ հանդիպեր է և երկու օր յետոյ ձիզօք է անցեր: Թիւրք կառավարութիւնը առահի այդպիսի մարդոց աւ հոգածու կը գտնուի: Գոմիսէր, բօլիս կը շրջապատեն զայն, զի մի գուցէ հարստահարած ժողովրդէն մէկ մը համարձակի յօտենալ և իր վիշտերը լայ այսպիսի մը և երկրորդ՝ արթուն կը հսկեն թէ մի գուցէ իրենց երկրին գալլ-քիւրդերը վնաս մը հասցնեն օտար տէրու-թեան ներկայացուցչին:

Օգոստ. 24.—Արքահամ Յովսէփեան անուն ազ-գայինը այգին կերթայ միակ արդիւնքն եղող 7 լիտր չամիչը հաւաքելու. պահապանը՝ Ահմէտ Տահաթ, որուն ագահութիւնը կը շարժի ընտիր չամիչին ի տես՝ կ'արգիլէ զայն, ինչու որ խեղճը վրան դրամ չունէր նոյն ժամուն 5 զըշ. պահպանողէքը տալու. ուստի գործը կը ձգէ յաջորդ օրուն, երբ պահապանը իր մէկնելէն յետոյ ամէն ինչ սրբեր տարեր էր և ինք բնականաբար բան մը չի գտներ տուն կրելու: 2 ամիչը առնւազն կ'արժէր 105 զուրուշ, լիտրը՝ 15-էն:

Նոյն օրը գիշեր Էօմէր Իսքանի տղայը՝ Տէրվիշ և Հասան կը յարձակին ձէմսէրը ասորեբնակ գեղին վրայ, կը վիրաւորեն մարդ մը՝ Մուրատ անուն և 2-3 ան-կողին և այլ բաներ աւարի կուտան:

Օգոստոս 24-ին Բարշինի մէջ տեղւոյն գայմագամ Մէհմէտ էֆէնտին ասորուոց Գասապրաիլ անուն չքահա-նային մատնութեամբ խուժը մը հայ երիտասարդ ար-հեստաւորներ կը ձերբակալէ իբր քաղաքական յան-ցաւոր. օր մը վերջ անոնցմէ ոմանք կ'արձակէ և միւս 10 հոգին, առանց նախնական քննութեան մ'անցնելու, շղթայաւ Լաթի կը զըկէ ուղղակի:

(Կը շարունակուի)

ԱՇԽԻՅԹԱԿԱՆ ԿՈՒԻ ՄԸ Ի ՊՈԶԹԱՆ

Թանգէ գիւղի աղա Էօմէրի եղբօր սպաննութիւնը Մէհմէտ Բէսուլի ձեռքով ժամանակին գրած ենք: Էօմէր աղան տեղս գալով կառավարութեան բողոքեց և չարա-գործներու պատժելը խնդրեց. և երբ համոզեցաւ որ իր ամէն դիմումներն արժէք չունին, այն ատեն իր ան-հատական ուժերով եղբօր վրէժն լուծելու որոշում տալով՝ կըսկսի բաւականաչափ զէնք հաւաքել նոյնիսկ պետական զէնքերէն (տեղւոյս զինուորական զինուոց մթե-րանոցէն այս տարի մի քանի անգամ մեծաբանակ զէնք գողցեցաւ, պահապան զինուորները կը ծախեն քիւրդ աշիրէթներու սուղ գնով և յետոյ իբր կորսւած կը տուժեն որոշած գնով: Յայտնի է թէ գաղտնի պա-րագաններու բերմամբ այսօր մեր տեղացի տաճիկներ և աշիրէթները պետական զէնքերով զինուած են գրեթէ ամբողջութեամբ) և գիւղ դառնալով կը հաւաքէ իր կուսակից աշիրէթները, Տէրշու և ուրիշ հինգ զանազան գիւղերու քիւրդերը և հակառակորդին բնակավայր. Կովաշէր գիւղին վրայ կը քալէ: Այս վերջինս ալ իր մարդերով կազմ ու պատրաստ ըլլալով՝ արիւնհասեղ կռիւ մը կըսկսի (օգոստոսի սկիզբները) Մէհմէտ գիւղին առջև: 24 ժաման կուոյն մէջ Մէհմէտի մարդերէն 5 հոգի կըսպաննուի, իսկ Էօմէրի կողմէն 7 և հոգի ալ վիրաւոր: Թէև Էօմէր աղան կը յաղթուի, բայց իր կու-սակիցներէն Տէրշու աշիրէթը իր հետ ուրիշ հինգ աշիրէթ առած, համագումար 2,000 մարդ, դարձեալ Մէհմէտի վրայ կը յարձակի և կ'այրէ ամբողջովին Մէհմէտ, Պասըխէ, Ճէտար քրդաբնակ և Թըլամշար 40 տնւոր քաղղէաբնակ գիւղերը և Կովաշէրի մէկ մասը: Կըսպաննուի կին մը և 5 հոգի վիրաւոր Մէհմէտի մար-դոցմէ: Ասկէ զատ կը թալանեն Կըրէհասանա և ուրիշ երկու քրդաբնակ և Պէնկով քաղղէաբնակ գիւղերը: Կառավարութիւնը որ Էօմէրին բողոքը լսելով առաջը պիտի առնէր այսքան արիւնհասեղութեանց ու վնասներու և կործանումներու, երկու գունդ զօրքով կը դիմէ կու-թատերաւայրը. Էօմէրի տունը կը թալանեն, կ'այրեն և ընտանիքով ու 10 մարդոցմով ձերբակալով Տըհ կը տանեն, կը բանտարկեն: Իսկ Մէհմէտ աղան, որ առատ կրծօնով շահած էր կառավարչին՝ իր հետեւորդներու ու երկու գունդ զօրքերու հետ Աթուշքէս կերթան (օգոստ. 20-ին) համիդիէ Մուսթաֆա փաշայի ճամբան բանալու համար, որովհետև ամէն տարւան պէս այս տարի ալ շէրնախցիք միակ անցքը գոցած են: Կառա-վարիչ և զօրք ոչինչ ըրած են ցարդ, Բաղէշէն օգնու-թիւն կը խնդրեն և օգոստոս 29-ին Ալայիբէկը գունդ մը հեծեալ զօրքով օգնութեան կը հասնի: Հոս ալ մեծ դէպքեր տեղի պիտի ունենան հաւանօրէն:

ԲԱՂԷՇ ՎԻԼԱՅԷԹԻ ՂԱՐՁԱՆՋԳԱԻԱՌԻ ՎԻՃԱԿԸ

Գաւառիս 3-4 տարւան խռովեալ և տագնապալի վիճակը ծանօթ է ձեզ արդէն: Վերջապէս «բարեխնամը» ձանձրանալով իրեն ուղղած անհատում՝ «սրտակեղիք դիմումներէն ու բողոքներէն» այս գաւառակը խաղաղե-ցնելու, բարեկարգելու իրատէ մը հանած է եղեր: Ասոր վրայ յունիսի մէջերը 5-600 զօրք թմբուկով, աղմուկով եկան Ղարզան հարստահարեալը պաշտպանելու և չա-

րագործը պատժելու բարձրագույն որոշումով: Չարագործ աղաները սարսափեցան և իրենցներով անառիկ տեղեր ապաստանեցան, բայց միայն մէկ շաբաթ: Զօրքերը նախ և առաջ իրենցմէ սպաննւած (մայիս 6-ի ընդհարումի մէջ) 3 հոգիներու և յափշտակած 17 մաուզերներու վրէժը լուծելու համար կը յարձակին յուլիս 4-ին Ալբերան աշիւթին Մալատիպ անուն ազգատոհմին վրայ: Կըսպաննեն անոնցմէ 5 հոգի, կը ձերբակալեն 16 հոգի և կը թալանեն անոնց 1,000 հատ ուղխարները և 100-է աւելի ջորիներ: Մէկ խօսքով անոնց ամէն ունեցածը, չմոռնալով անշուշտ բռնաբարել աղջիկներն և կիներ, սկսեալ 10-էն մինչև 60 տարեկան: Գաւառակին քիւրդ աղաներէ տլըքանցի Օսմանէ Էօմէր և Էօմէր Իսքանձ բանտարկւած կան այսօր: Իսկ արբանեակներէն նա մամանաւանդ Պշար և իր եղբայրը Ճէմիլ և Ալիէ Էօւնըս, որոնք այսքան տարիներէ ի վեր իրենց անցած տեղերուն մէջ ահ ու սարսափ, մահ և աւեր սփռած են ու կը սփռեն, մինչև այսօր իրենց զինեալ մարդիկներով զօրաց քթին տակ կը շարունակեն գիւղէ գիւղ շրջել, դրամ,

պաշար բռնի առնել, մէկ խօսքով թալել գիւղերը: Ասոնց միայն ընդարձակ բնակարանները այրած են և ասոր համար յիշեալք կառավարութեան տկարութիւնը ծաղրելու մտօք լուր կը ղրկեն զօրաց միշտ այսպէս, յի՞նչ կրցար ընել մեզի, եթէ կտրիճ էք, անգամ մը մեր դիրքերու վրայ յարձակելու քաջութիւն ունեցէք, մեր տներու այրումը մեզի հոգ չէ, ողջ մնան հայերը, ձե՞ք մեկնելէ անմիջապէս յետոյ, քիչ օրան մէջ աւելի փառաւոր տուներ պիտի կառուցանել տանք մեր ֆէլլահներու ձեռքով ու դրամով: Ըստ ալ իրաւունք ունին: Ղարզանի հայերուն վրայ հոգի չէ մնացեր ոչ նիւթապէս ոչ ալ բարոյապէս: Քիւրդերէն աւելցածը զօրքերը կուտեն ու կը յափշտակեն: Անպատկառ կերպով հանդիպած գիւղերուն մէջ ամէն տեսակ լրբութիւն, գազանութիւն և թալան կ'ընեն: Հարստացած աշիւթները զօրքերու շնորհիւ եթէ աղքատացան, ապահով են որ հայերու շնորհիւ պիտի հարստանան յետոյ: Ահա կառավարութեան «բարեկարգութիւն» կոչւած բարեբարութիւնները, զոր այսքան տարիներէ ի վեր կը խոստանայ հայերուն:

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ԿՈՒՍԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԺԻՋՐԷ ԳԱՀԱՐԱԿՆ ՆԵՐՔԻՆ ՎԻՃԱԿԻՆ ՎԵՐԱԲԵՐՆԱԼ

(Պատմէն, Թիւրքերէնէ թարգմանւած)

(Շարունակութիւն N° 3-ի)

ԸՄԱՌԱՆՏՈՒԹԵԱՆ ՀԵՏԾԻՆ ԱՆՄՐԸ

Թահիր աղայի Աստուծոյ կամքին և Մարգարէի օրէնքին հակառակ ի գործ դրած փարաւոնեան վարմունքներու և անկարգութիւններու ծայրայեղներէն մին ալ սահտեւեալն է, որ երբ ուէ գեղեցկուհիի մասին լուր կ'առնէ, անպատճառ նորա ամուսինը և եթէ նա դեռ ամուսնացած չէ, նորա հայրը կամ եղբայրը իր մօտ բերել տալով զանազան տանջանքներով և բռնութիւններով զայն փախչելու կամ լռելու կը ստիպէ: Այդ և ալ զանազան միջոցներու շնորհիւ շատ մը աղջիկներ և կիներ լլկած և քանի՜ քանի հրէայ աղջիկներուն կուսութիւնը պղծած է: Մինչև իսկ իր տղան Նաիֆի հարսնիքին առթիւ հաւաքել տւած կառավարական պաշտօնեաներէն, քաղաքի երևելիներէն և ժողովրդէն բաղկացեալ հազարի մօտ հոծ բազմութեան մը առջև, հրէայ կիները և աղջիկները պարել տւած և գիշերօք ալ տուններին յանկարծակի կոխել տալով, շատ մը կիներ և աղջիկներ դուրս քաշել տւած և անոնց վրայ ոչ մի կրօնքի և խղճի առջև արդարանալի վայրագութիւններ կատարել տւած է: Այդ դէպքի հետեւանօք է որ քանի մը կիներ իրենց ամուսիններու կողմէն արձակւած ըլլալով, խեղճերուն փողոցներու և գիւղերու մէջ թշուառ թափառելուն պատճառ դարձած է:

Իր բոլոր անօրինութիւններէն մին է նաև 5 տարիներէ ի վեր շինութիւնը դեռ չլինեցած տուներուն և խանութներուն ատաղձը՝ կայսերական հրամանով քանդելը արգիլւած հնութիւններէն մատակարարելը, որու մասին կ'արժէ որ հոս մի քիչ աւելի բացատրութիւններու մտնեմ, խորապէս համոզւած ըլլալով թէ անոնք մասնաւոր ուշադրութեան և անկեղծ ցաւակցութեան պիտի արժանան:

Քանի որ ճիգրէ գաւառակը Նոյի տապանին հան-

գըստարանը եղած ճուտի լեռան ստորոտը կը գտնուի, պէտք է ընդունել թէ նա ուրիշ քաղաքներէն շատ առաջ շէն վայր մը եղած է, որու մասին արդէն պատմութիւններն ալ կը վկայեն: Քաղաքին շուրջը բարձրացած պարիսպին շինութեանը համար գանձեր վատնւած են: Պարիսպէն ներս կը գտնուին մզկիթներու, աղօթատեղիներու և մէտրէսէներու (ուսուլմարան) պէս շատ մը հնութիւններ, որոնք շատ մը գիտութիւններու աւանդարան և Աստուծոյ անւան փառաբանարան ըլլալովն ին մէկ սրբութիւններ եղած են: Ահա այս վայրերը օտարազգիներուն ուշադրութիւնն ալ նկատի չառնելով, Թահիր աղայի հրամանով ասոնցմէ հարիւրէն աւելին հիմնայատակ քանդւած են: Այդ ալ բաւական չնկատելով, քաղաքին պարիսպն ալ քանդել տրւած և փլատակներու տակէն դուրս ելած քարերուն մի մասը ճիւղբէի մէջ իր սկսած շինութեան յատկացւած և մի մասն ալ Մուսթաֆա փաշային անապատ գտնուող յատուկ վայրերն փոխադրել տրւած են: Տեսնելով թէ ասոնք ալ իր խոշոր պէտքերուն չեն բաւեր, կառավարութեան պալատին մօտ գտնուող և Միր Համմամը անւամբ ծանօթ նշանաւոր հնութիւն մը և ճիւղբէի մէջ պետական ուրիշ հին շէնքերը քանդելով և պեղումներ կատարել տալով, նիւթերը և քարերը ամբողջովն իր շինութեան գործածել տւած և տէրութեան շէնքերու մէջ աշխատող գործաւորները, գաւառակի ժողովրդին մի մասը և անձնական գործերու համար քաղաք եկող գիւղացիները, կարծես հանրային խճուղիներու շինութեան համար եղած ըլլայ, 3-4-ական օրեր ձրիապէս աշխատել տւած է:

Գալով յիշեալ տուներուն համար պէտք եղած տախտակները ինչ կերպով ձարած ըլլալու հարցին՝ Տիգրանակերտ, Հասանքէյֆ և Սափրէն գետի ձաւթով մինչև Մուսուլ և Պաղտատ փոխադրուող բարտի (կաղամախ)

ծառերու քէլէքն եւրը ձեզրէի առջևը կը հասնին, ամէն մի քէլէքի (լաստ) գլուխ 5 մէծիտիյէ և 5 հատ ալ ծառ իբր տուրք չառած անցըր արգելած է։ Այդ բռնութեան շնորհիւ ձիզրէի առջևէն անցնող 10 հազարէն աւելի այսպիսի ապօրինի տուրքերով բեռնաւորելը՝ Տիարպէքիւրի, Մարտինի, Հասանքէյֆի և Սափրի բնակիչներու բարձրացուցած բողոքներովը և ադէկ խոշոր փնասներու ենթարկւած մարտինցի Վեօզիզատէ Ապտիւլ-գատիր փաշայի, Մարտինի իտարէի ժողովի անդամ Իսմայիլ Հագգը Էֆէնտիի և Սափրէն Համտուլլահ Կէկի և այլ վաճառականներու դիմումներովը հաստատւած իրողութիւն մըն է։ Դարձեալ ասկէ երեք ամիս առաջ Հասանքէյֆէն եկող բազմաթիւ քէլէքները ամբողջովին գրաւելով, անոր մէջ ծառայողներն ալ կառավարական շէնքի արտաքիններու մէջ 25 օր բռնի բանտարկել տւած է։ Եւ դարձեալ աղայէն կրած հարստահարութիւններու և կեղեքումներու երեսէն Պասպերթ գիւղի մէջ գտնուող գոյքերը և կահ կարասիքը և իրշատիյէ դպրոցները և թէքքէին յատուկ վագֆերը և գոյքերը թողնով Տիարպէքիւր գաղթած պասպերթի շէյխ Խալիտի որդին ուսումնական և ուղղահաւատ շէյխ Հիւսէյնի թէքքէին պատկանող 6,000 շուրուշ արժողութեամբ բարտինները, երբ Մուսուլ կ'անցնէին, զանոնք բռնի իւրացուցած ըլլալը դատարանի արձանագրութիւնով յայտնի է։

Վաճառականական ապրանքներ փոխադրող միւս քէլէքներն ալ ձիզրէի առաջ Թահիր աղայի կողմէ և Փէնխապուր գիւղի առջև ալ աշիրէթ քիւրդերու կողմէն կրկին անգամ ամէն մի քէլէկի գլուխ հնգական պարկ շաբար կամ ուրիշ ապրանքներ և 15-ական մէծիտ տուրք կը գանձին։ Մուսուլի բռնակիրներու պետ խալիտի Տիգրանակերտէն փոխադրած հազար ոսկի արժողութեամբ ցորենի քէլէքները Թահիր աղայի կողմէն կողպուած ըլլալուն, ապրանքին տէրը երբ ձիզրէ գալով բողոքել ուզեց, բայց իմանալով թէ այդ պարագային մարդասպանութեան ոճրի մը ամբաստանութեան տակ դատի ենթարկել պիտի տայ, խեղճ մարդը վախուն գիշերօք Մուսուլ խոյս տւաւ։ Մինչև իսկ 315 թւականին (1892-ին) ցամաքի ծածկով Պաղտատ ծածկորդող գերմանական պետութեան հպատակ երկու անձնաւորութիւններ՝ Փէնխապուրի մօտերը Մուսլաֆայ փաշայի մարդիկներու կողմէն յարձակում կրելով անոնց երկու հատ մանուկէր հրացանները և մէկ հեռագրատակը կողպուտեցան։ 316 (1900) տարւայ կիսուն ձիզրէէն Մուսուլ գացող երկրագործական փանգային քննիչ Ապտիւլ Հալիմ Հիլմի Էֆէնտիին գտնւած քէլէքը ձիզրէէն մէկ ժամ հեռաւորութեամբ Իլպահանի գիւղին առջև Մուսլաֆա փաշայի մարդիկներէն Հաճը Թըպթի կողմէ բռնակելով 5 գլուխ շաբար և անոր ընկերացող միւս քէլէքներէն ալ նոյնանման ապրանքներ առնելէ յետոյ, յիշեալ քննիչէն դարձեալ մէկ ոսկի և 2 մէծիտիյէ շորթած, անոր քովը գտնուող էսթէյցի Իպրահիմն ալ սաստիկ և քննիչ Էֆէնտիին նկատմամբ ալ շատ մը նախատական և անարգալի վարմունքներու մէջ գտնւած են։

Թահիր և անոր եղբայրը Փաթթահ աղաներուն և անոնց զաւակներուն թէ գասապաի և թէ գիւղերու մէջ ազգաբնակչութեան նկատմամբ ի գործ դրած տեսակ տեսակ կեղեքումները և բռնութիւնները, թալան և խոշտանգումները՝ բռնակալ հաճըներուն ժամանակին կատարած պիտմական ծանօթ արարքներն ալ մոռցնել

տւած է, և ինչպէս որ տէրութիւնները իրենց ապահովութեան տեսակետով գաղտնի ոստիկաններ կը կարգեն, նոյնպէս ալ ատոնց լրտեսներու վախէն հարստահարեալ ժողովուրդը և յուսահատւած պաշտօնեաները իրարու գէթ ցաւերը լալու համարձակութիւն ալ կորսնցուցած են, այն աստիճան որ կինը իր ամուսնոյն և հայրը իր զաւակին հետ այդ մասին խօսք մը, բառ մը արտասանելու կը քաշին։ Ուէ իշխանութեան կամ պաշտօնիայի անոնց դէմ բողոք բռնալու կարողութիւնը վերջնականապէս վերցւած ըլլալով ամէն ոք գուրանի ծանօթ նւիրական պարբերութեան վսեմ պարունակութիւնը մտաբերելով, սարսափէ ընդարմացած և իրենց ինչքով, կեանքով և անոնցմէ աւելի նւիրական, իրենց պատուով այս բռնապետներուն ափին մէջ ոչնչանալու դատապարտւած են։

Եթէ այս մարդիկներուն ցարդ կատարած բոլոր չարքներուն միջոցով ժանրամասնութեան մանել պէտք ըլլայ, խոշոր հատոր մը պիտի կազմէր։ Բայց մտածելով որ ասիկա պետական անձնաւորութեան ձանձրոյթ և աւելի վիշտ պիտի պատճառէ, հետեւաբար յարմար դատեցի զանոնք համառօտել ըստ գուրանի սա նւիրական պարբերութեան, թէ «խօսքերու լաւ կարճն է», և նկատելով որ ներկայ գրութեամբս գլխաւոր նպատակներէս մին եղած է «պէլթիւլ մալը միւսլիմ»-ին (խլամներու հասարակական գանձ) ցաւալի և ողբալի կերպերով փնասներու, կողպուտներու մատնւած ներկայ վիճակը պատկերացնել, մի բան որ ինծի կը հրամայէ իմ կրօնքս իմ խիղճս և պետական պաշտօնիայի հանգամանքս, հետեւաբար համարձակութիւնը պիտի ունենամ հոս պետական գանձուն վերաբերող հարցերուն և ատոնցմէ ալ անուղղակի ժողովրդին համար ծագում առած չարքներուն և զօհանքներուն մի քիչ աւելի մանրամասնութեանց մտնելու։

Գ Ա Ն Ձ Ո Ւ Ն Վ Ն Ա Ս Ն Ե Ր Ը

Թահիր աղան շնորհիւ իր բռնապետական արարքներու, որոնք միահեծան և բռնակալ իշխանութիւններու միակ յատուկ են, գազային ներսը և դուրս իր իշխանութեան տակ առած գանձուն հասոյթները իր բռնութեան գործիք դարձուցած է. իր այս սովորական ընթացքին համեմատ Բաղքին շրջականները գտնուող Հասնան և Մամօն համայնքին սեփական 50-էն աւելի շէն գիւղերուն ոմանց տուրքերը իր կողմէ վճարելու և թափուն իր անւանը անցնելու պայմաններով, ոմանց կեղծ ձեւակերպութիւններով և ոմանց ալ բռնի կնքած պայմանագրութիւններով ամբողջովին տիրացած է։

Այս գիւղերու բնակիչներէն բերբերու վրայ հարկերին քսան տասանորդական տուրք գանձելէ զատ, թահսիլաթի պատուակով կառավարութեանէն իր քովը 5-6 ժանտարմներ և ոստիկաններ առնելով, գրութեանս «ներկայ հարստութեան քանակութիւնը» բաժնին տակ մատնանիջ ըրածս իր ծառայարարներակներով գիւղացիներու վրայ բռնութիւններ կատարելով հարկ և զինւորական տուրք անւամբ գրամներ կը հաւաքէ, որոնք ամբողջութեամբ, առանց գանձուն մտնալու, իր քովը կը մնան, և այդ կերպով՝ այն հարկերը, որոնք ժողովրդէն գանձուած են դարձեալ անոնց անւան պետական տոմարներու մէջ պագիյէ կ'երևին։

Այս համայնքներու ոչխարները համրելու պաշտօնին ամէն տարի իր եղբօրորդին Մէհմէտ Արապ, գրագրութեան իր ծառաներէն Մէհմէտ Էմին և գօլճուութեան

(հսկողութիւն) դարձեալ իր ծառաներէն մէկը կարգել տալով, ամէն մի գիւղէն տարեկան այս տուրքին կրկինը բռնութեամբ կը գանձէ: Օրինակի համար մարդու մը անւան որչափ ոչխար արձանագրած է ամբողջ տուրքը կը գանձէ, բայց գանձած գրամը փոխանակ այն մարդու անւանը գրելու՝ երեւակայական և անծանօթ անձերու անւան տակ արձանագրել կուտայ: Այդ կարգէն ըլլալով հաստատուած է որ ճիշդէնի հասան Ահմէտ աղայի անւան, որ մէկ հատ ոչխար անգամ չունէր, 2,500 ոչխար գրել տուած է, մինչդեռ նոյն անձը աղայէն կրած հարստահարութիւններու հետեւեցող իր ընտանիքով վաղուց Տիգրանակերտ փոխադրուած էր: Անոր յարուցած բողոքին վրայ տեղի ունեցած պաշտօնական բանակցութիւններով թէեւ ճշմարտութիւնը երևան եկաւ, բայց և այնպէս 2,500 ոչխարի տուրքը իբր պագըյէ կը մնայ դեռ:

Ահա այսպիսի կեղծ ու խարդախ արարքներով և ի հարկին բռնութեամբ այս համայնքներուն ամբողջ ոչխարի տուրքերը, որոնք դեռ պագըյէ կ'երևին, հաւաքած և գիւղացիները իրեն մէկ մէկ կ'թանկով դարձուցացած է: Ոչխար համբելու այդ եղանակէն ծագում առած քանի քանի դատերը իր հայեցակէտով վճռած, քանի քանի մարդիկները կապած և քանի քանիներուն գոյքերն ու գրամները իւրացուցած է:

3) Պագայի աշարի (տասանորդի տուրք) աճուրդը անհրաժեշտօրէն Թաշիր և Փաթթաճ աղաներու և Մուսթաֆա փաշային փոխանորդը Ապտուլահադ աղային ներկայութեանը կը կատարուին: Արդ թէե գտնուին նիւթական կարողութեան տէր մարդիկ, որոնք փափագին գազաին աշարը մինչև վեց հազար ոսկիով իլթիզամ (վանին առնել) ընել, բայց աղաներու վախէն երբեք չեն համարձակիր անոնց առջև աճուրդին մասնակցելով գինները բարձրացնել, հետեւաբար աճուրդը միշտ կը գոցւի ի նպաստ աղաներու շահերուն, և շատ մը գիւղերու աշարը իրենց իսկական արժէքէն չափազանց վար գներով աղաներուն և անոնց զաւակներուն անւան կ'անցնին: Այսուամենայնիւ այդ կերպով ապահովուած շահերն ալ աղաներու կողմէ անբաւական տեսնելով, շատ մը գիւղեր կեղծ կնիքներով կնքուած գափմէներու (աճուրդի յատուկ թուղթ) վրայ ասոր անոր անւանը և անոնց անգիտակցութեամբ անցնել կը տրուին, և իբր թէ այդ գիւղերուն իլթիզամն ալ իրենք ստանձնած ըլլան իրենց շահներուն (չափող) ձեռքով և իրենց հսկողութեան տակ չափելու գործողութիւնը երբ կ'աւարտի, Փաթթաճ աղայի որդիները Մէհմէտ Արաբի և Ապտուլ, և Ապտուլահադ աղայի որդիները Ապտուլքէրիմի և ապտուլահադի 10-ական զինեալ ծառաներ տալով գիւղերը կը շրջեն, որոնք թէ այս վերջին գիւղերու և թէ իրենց անւան արձանագրուած գիւղերու արմտիքներուն ամէն մէկ տասը չափէն մէկ՝ թափուի, երեք՝ տասանորդի և դարձեալ մէկ ալ իբր շահնախ, ծառայի և այլ վարձքի անուններով իրաւունքներ կը վերցնեն և խուտրէվաթի (կանանչեղէն) իրաւունքն ալ իրենց ուզածին պէս կը գնահատեն և կը գանձեն: Գալով գիւղացիներու անւան մնացած գիւղերու տասանորդի տուրքերուն *), քանի

*) Կը պատահի երբեմն որ աճուրդի ատեն մէկ կամ մէկէ աւելի գիւղերու աշարի իրաւունքը գնողներ չեն գտնուի և կամ կառավարութիւնը տրուած գինը նւագ գտնելով չուզեր միւլթէզիմի մը յանձնել: Այդպիսի գիւղերու տասանորդ, տուրքը կառավարութեան կողմէ ուղղակի կը գանձուի: ԹԱՐԳՄԱՆԻՉ

որ կառավարութեան կողմէ գանձուած պահուն անոնց ծառաներուն ներկայութիւնը անհրաժեշտ պայման մը դարձած է. հետեւաբար ինչ որ կը գանձուի նախ Թաշիր աղայի կը յանձնուի ու այդպիսով պետական գանձուն հինգ փարա չմտնելով ամբողջութեամբ աղային անձնական գանձին կը մտնէ թէ արտակարգ պատճառներով գիւղացուց վրայ անվճար պահանջներ մնացեր են, ատոնք միայն գանձին տոմարներու մէջ պագըյէ կ'երևին: Ահա պետական գանձուն ներկայ վիճակը, որուն կը վկայեն ջախջախիչ շատ մը փաստեր և պաշտօնական արձանագրութիւններ:

(Կը շարունակուի)

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԻՏԱԼԻԱՅՈՒՍ

(ՆԱՄԱԿ ՄԻԼԱՆՈՑ)

Կիրակի օր, ապրիլի 26-ին, քաղաքիս «Փոստտի» կոչուած ժողովրդական թատրոնում տեղի ունեցաւ հրապարակական մեծ ցոյց՝ Խնայաստ հայերի և մակեդոնացիների հաւաքուած էր մեծ բազմութիւն — 4,000-ի չափ — հասարակութեան բոլոր խաւերից, քաղաքական բոլոր կուսակցութիւններից — սօցիալիստ, դեմոկրատ, հանրապետական, կնթովիկ-կղերական:

Կարգադիր յանձնաժողովը, որ կազմուել էր քիչ առաջ յայտնի արմատական հրապարակագիր Մօնետայի նախագահութեամբ՝ հրաւիրել էր այդ միտինգին ատենախօսելու՝ Պիէռ Կիառին, հայերի կողմից, և Սիմօն Բագէվին, մակեդոնացիների կողմից: Իտալացիներից խօսեցին՝ Մօնետա, Պինարդի, Տուրատի, Միչելի, կաթովիկ քահանայ Վերջինի և ուրիշները: Յայտնի պրօֆէսորներ, սենատորներ և ուրիշ քաղաքական գործիչներ նամակներով ոձ հեռագիրներով յայտնել էին իրենց համակրութիւնները: Համակրութեան հեռագիրներ ուղարկել էին նաև «Դրօշակ» և «Վիչերնայա Պօչտա» խմբագրութիւնները:

Մօնետա պարզեց միտինգի նպատակը. «Միլանի հասարակութիւնը, ասաց նա, պէտք է ցոյց տայ իր եղբայրական համերաշխութիւնը արիւնաթաթախ ազգերի նկատմամբ. Հայաստանի և Մակեդոնիայի հազարաւոր զոհերի աղաղակները պէտք է արձագանք գտնեն իտալացիների սրտերի մէջ, որոնք դեռ յիշում են օտարի դառն լուծը: Մեր սուրբ պարտականութիւնն է՝ հաւաքական ուժերով և ամենաեռանդուն կերպով միջամտել յօգուտ տառապեալ ու հեծեծող ազգերի: Արանչելի մի պատկեր է, երբ տեսնում էք, թէ ինչպէս մի ժողովուրդ ընթանում է դէպի իր ազատութեան նւաճումը, բայց աւելի ևս սքանչելի է, երբ արդէն ազատուած ու անկախ ժողովուրդները օգնութեան ձեռք են մեկնում ճնշուած ժողովուրդներին, որոնք անկարող են իրեն սեփական ուժերով ազատել լծից: Ահա թէ ինչ պէտք է անել Հայաստանի համար, հաս թէ ինչ է սպասում Մակեդոնիայի ազգաբնակչութիւնը... Հայերը մտածում են, որ Բելլինի դաշնագիրը ստորագրող պետութիւնների համաձայնութեամբ միայն իրենք կարող են ազատել թիւրքական լծից»:

Պինարդի ուրազածեց հայոց հարցի պատմութիւնը, յուզուած շեշտերով պատմեց հայկական աղետները: Դարձաւ պատմութեան և նկարագրելով տաճիկների կատարած ջարդերը զանազան ժամանակներում՝ ցոյց

ուեց, որ ջարդի ու աւերումի քաղաքականութիւնը աւանդական է ծածկաստանում: «Անշուշտ, մեր պարտքն է, մարդկութեան պարտքն է՝ բողոքել ոչ միայն սուլթանի ոճիրների դէմ, այլև եւրոպական պետութիւնների, որոնք չուզեցին իրագործել տալ խոստացած ռէֆորմները... Նախ քան ցրելը, մենք պիտի պահանջենք մի օրակարգով, որ վերջ դրւի այն զարհուրելի կոտորածներին, որոնք տեղի են ունենում մի խնթի ու խայտառակ սուլթանի շնորհիւ»:

Բեմ է դուրս գալիս «Պրօ Արմէնիա»-ի խմբագրական՝ Պիէ Է Կիսո, որին դիմաւորում են որոտագին կոչերով: «Կեցցէ՛ Քրանսիան»: Ոգևորութեանը չափ չկար: Կիսո ցաւ յայտնեց, որ Քրանսիա դը Պրէսանսէն՝ հակառակ իր ցանկութեան՝ անկարող եղաւ անձամբ Միլան գալ և մասնակցել ժողովին: Դիւանագիտական զօկու-մենտների վրայ հիմնելով մեր սիրելի բարեկամը մի առ մի պատմեց մեծ ու փոքր կոտորածները և ծանրացաւ մասնաւորապէս ներկայ վիճակի վրայ: «Ուրախալի է տեսնել որ իտալական վառվռուն սրտերը ներդաշնակ բարախելով եղբայրակից Քրանսիացիների հետ՝ բողոքում են այդ սոսկալի ոճիրների դէմ: Հայկական խնդրի լուծման եղանակի մասին խօսելով, շեշտեց եւրոպական հսկողութեան անհրաժեշտութեան վրայ: Անհրաժեշտ է երեք ռամկավարական երկրների — Քրանսիայի, Անգլիայի և Իտալիայի — համերաշխ գործակցութիւնը Արևելքում, ինչպէս այդ եղաւ Կրէտէի խնդրում: Այդ երեք պետութիւնների մէջ հանրային կարծիքը կարող է ուժեղ կերպով ազդել կառավարութիւնների վրայ և այդպիսով Հայաստանի և Մակեդոնիայի խնդիրները կարող են լուծւել առանց պատերազմի, առանց արիւնհեղութիւնների»:

Կիսո վերջացրեց բոլուն, որոտընդոտ ծափահարութիւնների մէջ:

Նրան հետևեց Միլանի հրապարակագիր Միչէլի: Զառերը հական կէտերով նմանում են իրար — երկար չենք կանք առնում: Հոնտորը, հակառակ իր թախանձանքներին, յաճախ ընդհատում էր ծափահարութիւններով: Նա համակրութեամբ յիշում է հայկական կուլի մի քանի էպիզոդները — Զէյթունի ապստամբութիւնը և Էդհէմ փաշայի ամօթալի նահանջը: Բանկ Օտտոմանի գրաւումը և այլն: Սուլթանը աւազակներից գնդեր է կազմում, որոնք փարա չեն ստանում և անօթի մնալով՝ ստիպւած են կողոպտել...:

Միչելի դառնում է իտալացի հռչակաւոր յեղափոխական Մաձինիի ծրագրին, որը ասում է.

«Բալկանեան նահանգների համար հարկաւոր չէ միապետական ռէժիմ, ինչպէս ուզում է ռուսաց ցարը, և ոչ էլ մի խումբ թագակիրներ, ինչպէս փափագում է Աւստրիան, այլ մի տեսակ ազնւեկան Զւիցերիա»:

Խօսեցին այնուհետև սօցիալիստ Տուրատի, բելգիացի հայասէր Լօրան, որ ներկայ էր անցեալ տարի Բրիւսէլի համաժողովին, և քահանայ Վերչիզի: Առանձին հետաքրքրութիւն է ներկայացնում այդ վերջինի ճառը:

«Չափազանց ուրախ եմ, աքաց նա, մասնակցել այս բազմամարդ ժողովին քաղաքական հակառակորդներին հետ, որոնց հետ թէև ամենօրեայ պայքարի մէջ ենք, նակայն ամենասերտ կերպով համերաշխ ենք՝ մարդկային արդարութեան գաղափարը առաջ մղելու համար: Քաղաքականութիւնը բաժանում է, իսկ լուսաւորութիւնը միացնում: Պէտք է, որ մեր երկրի բոլոր կուսակցութիւն-

ները, բոլոր խղճամիտ մարդիկ զբաղեն արհաւիր քաղաքականութեամբ. պէտք է ամէնքս միանանք՝ բողոքելու թագակիր աւազակի դէմ, որպէս զի նա դադարէ ներկել իր խարխուլ գահը մարդկային մկրտած կամ չմկրտած արիւնով: Երբ մի մարդ սպանում է միւսին, եթէ մենք ձայն չբարձրացնենք, ուղղակի մասնակից կը լինենք ոճրագործութեան»:

Մեր ընկեր Լօրիս Մէլի քեան, որի նախաձեռնութեամբ կազմակերպւել էր միտինգը, հակիրճ ու զգացւած խօսքերով ի տես դրեց հայ ժողովրդի ներկայ անգէն ու անպաշտպան վիճակը, որ կարօտ է քաղաքակիրթ ազգերի օգնութեան. ապա սրտագին շնորհակալութիւն յայտնեց այն բոլոր համակրելի իտալացիներին, որոնք անմիջապէս և այնքան ջերմութեամբ արձագանք էին տւել իր հրաւերին: Մեր ընկերոջ ճառի սկիզբն ու վերջը արժանացան երկարատե ծափահարութիւնների:

Մակեդոնացիների կողմից խօսեց Le Mouvement Macedonien-ի շնորհալի խմբագիր՝ Սիմօն Տագէվ:

«Եւրոպան զգաստանում է, ասաց նա. երէկ Քրանսիան էր, այսօր Իտալիան է, որ իր ձայնն է բարձրացնում յօգուտ արևելքի հարստահարւածների: Մակեդոնացիք պահանջում են Եւրոպայի հաւաքական հսկողութիւն. այդ է նրանց պահանջների ծուծը: Մակեդոնիան ուզում է մնալ թիրբական նահանգ, միայն թէ երաշխաւորեն օրէնքի գործադրութիւնը: Մակեդոնացիք հաւատ ունեն Եւրոպայի վրայ, բայց աւելի՛ չը կրթին իրենց սեփական ուժերի վրայ: Նրանք որոշած են ուժով նւաճել իրենց ազատութիւնը և նրանք պիտի անեն յեղափոխութիւն, որքան էլ մեծ աղետներ առաջանան դրանից» (Բուռն ծափահարութիւններ):

Խօսեցին նաև Corda Fratres ուսանողական ընկերութեան պատգամաւորը և մի անիշխանական, որոնք իրենց ջերմ համակրութիւնը յայտնեցին Հայաստանին ու Մակեդոնիային:

Ահաւասիկ այն որոշումը, որ ընդունւեց միաձայն և անվերջ ծափահարութիւններով.

Միլան, 26 ապրիլ 1903 թ.

Միլանի քաղաքացիները, հաւաքւած ներկայ ժողովում, բոլոր քաղաքական կուսակցութիւնների կամքով՝

Յուզւած այն հրէշային ոճիրներից, որոնք կատարւել են Հայաստանում ու Մակեդոնիայում եւ որոնք մի սոսկալի անարգանք լինելով՝ մարդկայնութեան զգացումի համար, միաժամանակ մի ծաղր են ուղղւած միջազգային դաշինքներին, որոնք սրբագործւած են հանդիսաւոր կերպով՝

Միանում են իրենց հոգու բոլոր ուժով այն բողոքներին, որոնք բարձրանում են քաղաքակրթւած աշխարհի բոլոր մասերից՝ ընդդէմ այն անարդարութիւնների, որոնց մասնում են այդ երկրներին:

Ձերմ բաղձանք են յայտնում, որ Իտալիայի կառավարութիւնը հաճի մասնակցել շուտընդմիջ ու կորովի կերպով այն պայմանների իրագործումին, որոնց զօրաւորութիւնը չքայտւում է ամէն հիասթափութիւն»:

* * *

Հարժու՛մի ի նպաստ երկու ժողովուրդների չէ սահմանափակում միմիայն Միլանով: Մեր ընկերոջ նախաձեռնութեամբ կազմւել են յանձնաժողովներ նաև Հոնդուսում ու Տուրինում, ուր անցեալ օր խօսեց Պիէ Կիսո: Միտինգարական է տեսնել, որ իտալացիք չափազանց մօտ են ընդունում իրենց սրտին հայ ժողովրդի

դատը և Միլանում տեղի ունեցած հոյակապ միտինգի որոշումը Յանձնաժողովի միջոցով այսօր արդեն հաղորդւած է ի գիտութիւն արտաքին գործերի մինիստրի:

Հռովմում գումարեց մի ժողով, ուր ներկայ էին ամենականաւոր քաղաքացիներ: Այդտեղ էր և Ֆրանսիայի հռչակաւոր գրող, «Պրո Արմէնիա» խմբագրութեան անդամ, Անատոլ Ֆրանս, որի մասնակցութիւնը մի առանձին փայլ էր տալիս ժողովին: Առաջ ենք բերում քաղաածօրէն նրա գեղեցիկ ճառը, որ հրատարակւած է «Տան» ի մէջ.

Տիկիններ և պարոններ,

«Եթէ ես պատիւ ունեցայ այստեղ ձեր շարքերում գտնուելու, եթէ ես կանչւած եմ միանալու Ձեր ակումբի այս դահլիճում Հռովմի հրապարակասեններին, — ես գալիս եմ իբրեւ խմբագիր «Պրո Արմէնիա»-ի, շատ փոքրիկ մի թերթի, խղճով պաշտպան մի մեծ դատի, որ հիմնել է Պարիզում Պիէռ Կիառ՝ Ֆրանսիա դը Պրէսանտէի, Ժօնէսի և Կլէմանտի աջակցութեամբ: Եւ իմ առաջին քաղցր պարտականութիւնն է՝ ողջունել յաւիտենական Քաղաքի իմ պաշտօնակիցներին: Ապա թոյլ տւէք ինձ ասել, պարոններ, որքան ես սիրում եմ Իտալիան և որպիսի յարգանք է ներշնչում ինձ Հռովմը: Այն կարճատեւ ժամերի մէջ, որ կարողանում եմ անցնել այստեղ, ես ճաշակում եմ անմասն բերկրանքներ...»

«Դիտելով ձեր հինաւորաց յուշարձանները՝ մի Ֆրանսիացի իրեն օտար չէ զգում ձեզ մօտ... Երբ անցնում եմ ձեր համբաւաւոր փողոցներով ու հրապարակներով, ամէն վայրկեան ես տեսնում եմ հետքերը փառքի և զօրութեան: Բայց բոլոր յիշատակներից ամենաքանդելին թերեւս այն խաղաղարար ժեստն է, որով ձեր Մարկ-Օրելը Կապիտօլի բարձրութիւնից ամոքում է բարբարոսներին:

«Համարեայ միւսնոյն ժեստն է, պարոններ, որ դուք եկել էք անելու այստեղ: Անտարկոյս, դուք չէք կարող թագաւոր փրկիսփայի պէս ձեր ձեռքը տարածելով խաղաղացնել տիեզերքը: Բայց վերջապէս դուք եկել էք աշխատելու այս դահլիճում, եւրօպական խաղաղութեան համար, ձեր ուժերի համեմատ, որոնք փոքր չեն, քանի որ նրանք մտքի ուժերն են: Այստեղ միմիայն յօշոտւած Մակեդոնիայի և նահատակ Հայաստանի խնդիրները չեն, այլ պէտք է առաջ բերել բարոյական միացում և մտաւոր համերաշխութիւն քաղաքակիրթ եւրօպայում: Ձեր մարդաբանական դպրոցի տեսուչ, հռչակաւոր պրօֆէսոր Սէրջի ասաց քիչ առաջ ամենավսեմ խօսքերով թէ ինչպէս հայոց դատը հրապարակ է բերւած եւրօպայի բոլոր մայրաքաղաքներում: Այս ձմեռ նա ներկայացւեց Պարիզում: Իմ երկրի մէջ, բաժանւած այսօր երկու կուսակցութիւնների միջև, որոնք մարանչում են կատաղօրէն, ամենաթուփ հակառակորդները միացել են՝ պաշտպանելու հայոց դատը...»

«Սրտի մարդկանց այդ միութիւնը — մի անհրաժեշտ ու վեհանձն գործ կատարելու համար — նոյնքան դիւրութեամբ կը կայանայ և՛ ձեր մէջ, պարոններ... Եւ այն ժամանակ զուր իղձեր չէ, որ կը ձևակերպւին, ապարդիւն գանգատներ չէ, որ կ'արտասանւին: Ձեր պահանջը, ինչպէս մերը, որոշ է, օրինաւոր, գործնական, դա լիակատար կիրառումն է Բերլինի դաշնագրի...»

«Հանրային կարծիքը մեծ ուժ է: Մեր ժամանակում, եւրօպայի մի մասում, նա ուժերի մեծագոյնն է: Իտա-

լիայի հանրային կարծիքը միանալով ուրիշ քաղաքակիրթ ժողովուրդներին՝ կարելի է յուսաւ, որ այդ միացած ճիգերով կը հիմնւի միջազգային իրաւունքը...»

Ժողովը յանձնարարեց պրօֆէսոր Սերջին՝ նշանակել մի կօմիտէ, որը շատ կարճ միջոցում պիտի կազմակերպէ մեծ միտինգ՝ «Հայաստանի և Մակեդոնիայի համար»:

Ահա այն հրաւերը, որ Միլանի Յանձնաժողովը փակցրել էր քաղաքի պատերին, միտինգի գումարման նախընթաց օրը.

Քաղաքացիներ,

«Մի տէրութիւն, որ վատ միջնորդ է Ասիայի եւ Եւրօպայի միջև, մատակարարում է մեզ այսօր իր բարբարոսութեան սոսկալի տեսարանը՝ թէ իր արեւելեան սահմանի վրայ — Հայաստանում, եւ թէ արեւմտեան սահմանի վրայ — Մակեդոնիայում:

Ջարդերը և նահատակութիւնները, որոնց մատուած է Հայաստանը, զիջատիչ եւ վայրագ հօրդանների գործ են՝ ներառող ծածկ մի չարաշուք արտօնութեամբ, մինչդեռ Մակեդոնիայի վրայ ծանրանում են գազանային հալածանքներ՝ ուղղւած ապստամբութիւնների դէմ, որոնք ծագել են շնորհիւ կառավարութեան իրօք անլուր անկարգութիւնների:

Այն Կանդիսաւոր պարտաւորութիւնները, որ սուլթանը ստանձնել է եւրօպական դիւանագիտութեան առջեւ՝ պիտի վաղուց ստիպէին Թիւրքիային՝ սանձաւարել այդ վայրագ հօրդաններին եւ դարձնել իր յոռի կառավարութեան հետեւանքները: Սակայն այդ պարտաւորութիւնները վերածւել են միշտ մի սոսկալի հեգնութեան: Եւրօպական ռազմադիտութիւնը, որ տարբեր շահերի պատճառով տարուբերում է միշտ, չի գործ դնում իր կողմից բաւականաչափ ճշշում օսմանեան կառավարութեան վրայ եւ կարծես արդէն նրա խաղաղքը դառնալու վրայ է:

Սակայն քաղաքակրթւած ազգերի զգացումը ապստամբում է միշտ աւելի կորովի կերպով Թիւրքիայի գործած դարչանքների դէմ: Ժամանակակից քաղաքակրթութիւնը միշտ աւելի եւ աւելի սերտ եղբայրական յարաբերութիւններ է հաստատում ազգերի միջև եւ սարսափի ու զգուշացման զգացումը, յարուցւած որոշ հեղաշրջումներով, չի մոռում այլեւս փակւած մտքի մի ամուլ շարժման սահմաններում: Մենք զգում ենք, որ մենք համարեայ մեղսակից կը լինէինք ուրիշի գործած ոճիրներին, եթէ մոռանայինք առաջադրել նրանց համար դարձան: Մենք մեր մէջ իրաւունք եւ պարտաւորութիւն ենք զգում ապստամբել ամէն մէկի դէմ, յանուն նահատակւած մարդկութեան:

Քաղաքացիներ, այդ պատճառով է, որ քաղաքակիրթ մարդկանց մէջ բարձրանում է, յանուն չարչարւած մարդկութեան, բողոք միշտ աւելի անաւոր, որի նպատակն է՝ ստիպել Եւրօպայի կառավարութիւններին միջամտել յօգուտ հայերի եւ մակեդոնացիների, որոնք ընկճոււմ են Թիւրքական գազանութիւնների եւ սոսկալի վայրագութիւնների առջեւ:

Բողոքը պիտի լինի այնպէս միահամուռ եւ այնպէս ուժեղ, որ այլեւս ընդհատւին ձգձգումները, լռեն դիւանագիտութեան անհամաձայնութիւնները: Քաղաքակիրթ կառավարութիւնների միահամուռ կամքը կը դառնայ յետագայում այնպիսի մի պահանջ, որ Տիւրքաստանը կը սանձահարւի ընդմիջ եւ այլեւս անհրաժեշտ չի լինի զինել գերագոյն միջոցին:

Քաղաքացիներ, այդպիսով մի ճշմարիտ խաչակրաց արշաւանք է քարոզւում՝ քաղաքակրթութեան ընդդէմ բարբարոսութեան: Այդպէս է ուղղւած մարդկութիւնը՝ Պէտք է, որ Իտալիան միանայ այս սուրբ դրօշի շուրջը, որ Միլանը փողփողում է իր բոլոր պայծառութեամբ:

խտալական շարքերի մէջ: Դուք կը լսէք խտալացի եւ օտար պերճախօս հոգեւորների, որոնք կը զարգացնեն նոյն մտքերը, որ մենք յիշեցինք, հրաւիրելով ձեզ մեր ժողովին: Ոչ մի կուսակցական տարաձայնութիւն չի բաժանում մեզ այդ կէտուով: Եկէ՛ք բոլորդ:»

Հետեւում են բազմաթիւ ստորագրութիւններ՝ պարլամենտի անդամների, սենատորների, գրողների և այլն:

Մ Ա Մ Ո Ւ Լ Ի Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

Temps-ի թղթակիցը «Սարսափելի եղելութիւն» վերնագրով մի նամակի մէջ հետեւեալ մանրամասնութիւններն է հաղորդում Սալոնիկի վերջին անցքերի և Բանկ Օտտոմանի աւերման մասին:

«... Յիսունի չափ դաւադիրներ մի բնակարանի տանիքներից և հարեան պանդոկի լուսամուտներից ուռմբերի մի ճշմարիտ հեղեղ էին թափում, ձգտելով ամէն կերպ արգելել ունէ օգնութիւն այդ հիմնարկութեանը (Բանկ Օտտոմանի մասնաճիւղը), որ որոշել էին անպայման կործանել: Մօտ երեսուն ուռմբի պայթիւն լսեցին այդ տեղում: Պատերից մէկը փլուզւեց՝ չորս զոհ տուց, որոնցից երկուսը — մէկ իտալացի և մէկ շվեյցարացի — մեռան, մի անգլիացի՝ ծանր, մահացու և մի գերմանացի՝ թեթեւ կերպով վիրաւորւած է:

«Այդ վիճակի դիմաց՝ ընդհանուր կառավարիչը հրաման տուց ժանդարմերիայի գլխաւորին՝ կոտորել անմիջապէս բոլոր կասկածելիներին: Իսկ թիւրքի համար այժմ ամէն մի բուլգար կասկածելի է: Սկսեց այն ժամանակ մի սոսկալի կոտորած փողոցներում, խաներում և բուլգարական թաղերում: Այդ առաջին գիշերւայ ընթացքում, ասում են, սպանեցին 400-ից աւելի և վիրաւորեցին 5-600 հոգի, որոնք թափեցին Կօնստանդնուքի բակը: Զարգերը և ձերբակալութիւնները շարունակուում են: Զոհերի թիւը այժմ անցնում է 1,000-ից: Դիակները սայլերով տարւում են թիւրքաց գերեզմանատուն, ուր մնում են առանց թաղման 36-48 ժամ շարունակ: Թիւրքերը կարծում են, որ բուլգարներից ազատելու համար միակ միջոցն է՝ կոտորել բոլորին: Կանայք և երեխաներ նոյնպէս չեն խնայւած: Ամբոխի միջից երբեմն լսում են այնպիսի խօսակցութիւններ, որոնցից փշաքաղում են մարդու մազերը...»

«Հանրային ճանապարհների վրայ բուլգարների որս է ծիշդ այնպէս, ինչպէս կ'որսան ճագարներին: Բաւական է ունէ մատնիչ — իսկ այդպիսիք քիչ չեն տեղացիների մէջ — ցոյց տալ զինւորներին ունէ անցորդի — իսկոյն և եթ յարձակւում ու խողխողում են առանց այլեայլութեան: Եթէ այդ անցորդը ուռմբ է ունենում իր ձեռքը, կարողանում է հեռացնել յարձակողներին: Վերջինները պատասխանում են հրացանաձգութեամբ և այդ պատճառով հաղորդակցութիւնը դառնում է այժմ վերին աստիճանի վտանգաւոր:

«Բուլգարների գիւրքը, այն պաղարիւնութիւնը, որով նրանք դիմաւորում են մահը, այն հեգնութիւնն ու արհամարհանքը, որով սպանում են իրենց թշնամիներին — այդ բոլորը վկայում է այնպիսի մի հոգեկան տրամադրութիւն, որ հասնում է ծայրայեղ յուսահատութեան. այդ մարդիկ նախօրոք որոշած են զոհաբերել

իրենց կեանքը: Ըստերը նրանցից լաւագոյն են համարում անձնասպան լինել, քան թէ ընկնել թշնամու ձեռքը: Դա մի ճշմարիտ դաւադրութիւն է, որ ունի հազարաւոր համախոհներ: Նա նիւթել է մի ծրագիր, որի իրագործման սկիզբն ենք միայն տեսնում:»

Հետեւեալ իրողութիւնը ցոյց է տալիս, թէ որպիսի հերոսական կռիւ են մղում այսօր մակեդոնացի հայդուկները:

Մօտ 30 հոգուց բաղկացած հրոսանների մի խումբ մի քանի օր առաջ իջաւ Սամարշիկ գիւղը և ապաստանեց գիւղի ունեցող մի քրիստոնիայի տան մէջ: Մի լրտեսի մատնութեան շնորհիւ 200 թիւրք զինւորներ եկան վաղ առտուն պաշարեցին գիւղը և ուղեցին ներս խուժել: Խումբը դիմաւորեց նրանց գնդակներով, բայց հայդուկների թիւը շատ չնչին էր երկար գիմադրութեան համար: Զինւորները կարողացան յօտենալ տան և կարծում էին թէ արդէն իրենց ձեռքն են հայդուկները, երբ յանկարծ այդ վերջինները դուրս թռան իրենց թաքստից և մի քանի ուռմբ նետելով, ցիրցան արին թիւրքերին: Այն ժամանակ մեր քաջերը կարողացան փախուստ տալ: Զինւորները մի րոպէ հետամուտ եղան, բայց արդէն ուշ էր. սպանեցին դաշտում գտնուող մի քանի խաղաղ գեղջիկների, որոնց թւում՝ գիւղի ջահէլ հանդապահին:

Այնուհետեւ նրանք վերադարձան գիւղ, սկսեցին խուզարկութիւններ, մօտ 20 հոգի բանտարկեցին և ահռելի կերպով տանջեցին, դաժանակի հարւածներ տալով, ատամները դուրս քաշելով: Վերջապէս իսպառ թալանեցին գիւղը և կրակի մատնեցին: Հայդուկային խումբը կորցրեց իր երկու առաջնորդներին: Գիւղի բնակիչները փախան ու ապաստանեցին լեռներում:

Temps-ի Վիեննայի թղթակիցը հաղորդում է ուշագրաւ մանրամասնութիւններ մակեդոնական յեղափոխականների ընդարձակ ծրագրի և խիզախ ձեռնարկների մասին՝ Սալոնիկում:

Դիշերը վրայ հասնելուն պէս՝ դաւադիրները կտրեցին գազի և ջրի անցքերը, օդը ցնդեցնելով այն կամուրջը, որ միացնում է երկաթուղու կայարանը քաղաքի հետ: Միւս կողմից նրանք փորձեցին հրդեհել նաւթի պահեստը: Այդպիսով ամբողջ քաղաքը խորասուզեցին մթութեան մէջ, աշխատելով միաժամանակ զրկել նրան ջրից և հեղեղել նաւթով: Ապա սկսեցին ուռմբեր նետել աջ ու ձախ՝ կառքի մէջ սլանալով գլխաւոր փողոցներով, ոտքի վրայ գործում էին յետ ընկած թաղերի մէջ, յարձակելով մանաւանդ հասարակական այն տեղերի վրայ, ուր յաճախում են եւրօպացիք և մասնաւորապէս գերմանացիների, Թիւրքիոյ լաւագոյն բարեկամների, ժողովատեղիների և բանկ օտտոմանի վրայ, որ ներկայացուցիչ է բալկանեան ժողովուրդներին շահագործող եւրօպական բարձր ֆինանսների: Մինչ այդպէս պայթիւններով ցրւում էին ոստիկանութեան ուշագրութիւնը և զօրքերի գործողութիւնները, դաւադիրները գրոհ տւին գլխաւոր պատւարի՝ բանկ օտտոմանի վրայ, հաւանականօրէն ջրմուղով կամ թէ գետնափոր մի անցքով, որ յետոյ գտնւեց: Վերջին վայրկեանին՝ նախազգու-

շացրին բանկի կառավարչին, որ հեռանայ ընտանիքով. — այդպէս էլ եղաւ:

Բազմաթիւ ուռւներ պայթեցին նախ այգու մէջ: Պահպան ժանդարմը սպանեց ատրճանակի մի հար-
ւածով: Ապա յեղափոխականները ազատ ճամբայ ունե-
նալով՝ սկսեցին մեծ քանակութեամբ ուռւներ պայ-
թեցնել ներսում:

Տ Ե Ռ Օ Ր

Վասպուրականի կեդր. Կոմիտէի որոշմամբ տէնորի
ենթարկեցաւ յայտնի մատնիչ Խ ա չ ի կ Ս է մ է ր -
Ճ ե ա ն ը փետրուար 2/15-ին կիրակի երեկոյ ժամը 11-ին:
Տէնորիստը ազատ է:

Ն Ի Ի Ր Ա Տ Ի Ո Ի Թ Ի Ի Ն

ՆԱԽԱՅԱՆԳՍՑԻ Կեդր. Կոմիտէն ստացած է՝

Հրաշենի Գրգուռ խմբ. 300 ուռւի, Հրաշենի Հարիւր խմբ.
40, Վարազդատ խմբ. 100, Գազան տարօնեցի խմբ. 100, Կայծակ
խմբ. 100, Արծիւ խմբ. 60, Ժովասար խմբ. 80, Տարօնեցի խմբ.
57, Բիւրակն խմբ. 30, Կարէզ խմբ. 45, Առիւծ խմբ. 30, Նեփ-
րովտ խմբ. 35, Յրնկատար խմբ. 30, Յրնկատարի խմբապետ
20, Սիփան 35, Իշխանակ խմբ. 21, Իշխանակ Մ-բից 8, Նա-
ւիխան խմբ. 20, Խիկար խմբ. 17, Ռուբինեաց խմբ. 10, Ռուս-
նողական վերժառու խմբ. 8, 50, Արագած խմբ. 5 ուռւի:

Յունւարի ամսավճարներ նախորդ տարւան մնացածով միասին.
Արմատ խմբի երեք ծիւղերից 100 ուռւի, Արշաւի խմբ. 180,
Աղբիւրատու խմբ. 36, 50, Բիւրակն խմբ. 36, 50, Սիփան խմբ.
36, Կայծակ խմբ. 38, 90, Սոչխան խմբ. 60, Իշխանակ խմբ. 28,
Իշխանակ խմբ. 8, Կարեւ խմբ. 24, 60, Գազան տարօնեցի 23,
Ճարտար խմբ. 19, Յրնկատար խմբ. 22, 30, Վարազդատ խմբ.
20, Արագած խմբ. 20, 20, Խիկար խմբ. 11, Խաչալի խմբ. 10,
Ժովասար խմբ. 8, 80, Մազանի պողպատ 3, 50, Չորափորի
Գեթսեմունի խմբ. 34, 40, Դերձակ խումբից՝ Պալի 1, 50, Մամիկոն
1, 50, Գուրգէն 1, 50, Մարդասէր 1, 50, Տ. Աւետիք 3, Վահան
3, 20, Ս. Զօրավար 0, 40, Որսորդ 1, Բերրո 3, 40, Սմբատ 3, 20,
Անցորդ 0, 60, Ջինուր 0, 75, Շիրվան 0, 80, Շիրակ 2, 40, Փերատ
1, 60, Մ. Կայծակ 1, Ա. Բ. 1, Շահազար 1, 60, Մ. Նուբար 1, 80,
Լիւսիկ 3, Ալիշան 0, 40, Տիգրան 0, 80, Տաճատ 1, Եղեմ 1,
Հայկ 1, Վարդգէս, Արաքսիա, ՄԴԷ, Մարի զինուոր, Մ. Զազան,
Տիգ 50-ական կօպէկ, Արամ 25 կ., Շիրվան 30 կ., Զար 20 կ.,
Կրօտ 20 կ., Դերձակ խմբի Նոր-կենք ծիւղից՝ Գ. Վահան,
Ասլան, Կայտառ, Վարդ, Մուշեղ, Արտաւազ, Մամուկ, Բաբկէն,
Արպի, Աշ. Երկաթ, Արտաշէս, Երւանդ, Հ. Զօրաւոր, Վարդան,
Վաղարշակ, Մ. 50-ական կօպէկ, Վիճակախաղից 25 ուռւի,
Լուսիկից 5, Վեց տղաներից տուգանք 3, Շանթ խմբից սխմի-
մամբ ուշացած 6 ուռւի:

Ընթանուր զուժար 1902 ուռւի 10 կօպէկ:

ՔԱՐԻ Կեդր. Կոմիտէն՝

1901 թ. ընթացքում՝ ՔԱՐԻՍ Եղած խմբերի ամսավճարներ
Արմէնիա խմբ. 19, 90 ուռւի, Թաթուլ խմբ. 21, 98, Աղբիւր խմբ.
29, 20, Գուրգէն խմբ. 1, 85, Արշալոյս խմբ. 34, Անանուն խմբ.
2, 60, Վազգէն 15, 45, Նախագործ զինուոր Արծիւ խմբ. 12, Տօ-
նածառից ստացւած 32, 71, ծախւած երկու անտէր հրացանի
փող 18, Նւէր զանձապահից 5, մնացորդ առ 1-ն յունւարի
1901 թ. 62, 61 ուռւի:

1902 թ. ընթացքում՝ մնացորդ առ 1-ն յունւարի 1902 թ.
50, 30 ուռւի, ստացւած ապառիկ ի հաշիւ 1901 թ. 0, 20, ծախւած
մի ձի 11, 60 ուռւի:

Ենթակոմիտէներից ստացւած՝ հանգանակութիւն եւ Նւէր,
Թուրքից (յունիս) 82, 83 ուռւի, Վանաձորից՝ քահանայից՝
(օգոստոս) 100, Փանակուր զինուոր (սեպտ.) 28, 15, Տղմուտ
զինուոր (սեպտ.) 21, Ախուրեան զինուոր (սեպտ.) 11, 65, Թիշնակ
զինուոր (սեպտ.) 25, 87, Եփրատ զինուոր (հոկտ.) 40, Դուռնա-
պատ զինուոր (նոյեմբ.) 20, Ժողով զինուոր (նոյեմբ.) 20, Բլուր
զինուոր (դեկտ.) 10, Բլուր զինուոր Վրասից Նւէր (դեկտ.) 10,
Բարդաշեն զինուոր Վրասից Նւէր 13, Ռիւստաւորից Նւէր 7,

Գանդման զինուոր հոկտ. տրւած ներկայացումից 23, 10, պմա-
վճարներ՝ Գանդման զինուոր 24, 60, Գետափ զինուոր 10, 20,
Փլատակ զինուոր 3, Բալիթուն զինուոր 6, 80, Բելեո զինուոր
19, 60, Բարձաշեն զինուոր 9, 85: Տեղում՝ հանգանակութիւն եւ
Նւէր ապրիլ ամսին Սէրգէնի ժամանակ Նիքրատուութեան
N° N° 173, 174, 175 եւ 176 թերթերով 196, մայիսին մի ժող-
վում հանգանակւած 18, 86, օգոստոսին Փարհատի ծնոքով հան-
գանակւած 2, 60, մի հարսանիքում Նիքրատի ծնոքով 6 ուռւի:

Նիքրատութեան թերթերով:

N°		N°		N°	
1	6 ուռւի	7	3 ուռւի	22	2, 90 ուռւի
2	2, 65 "	8	5, 75 "	23	12 "
3	21, 50 "	9	5, 65 "	24	10, 25 "
4	4, 10 "	11	5, 5 "	25	59 "
5	4 "	12	13, 10 "	28	1 "
6	6 "	15	67 "	29	12 "

Ստացագիրներով:

N°		N°		N°	
1246	75 ուռւի	1254	10 ուռւի	1261	5 ուռւի
1248	20 "	1255	5 "	1262	15 "
1249	70 "	1256	5 "	1263	10 "
1250	10 "	1257	5 "	1264	50 "
1251	20 "	1258	5 "	1265	15 "
1252	15 "	1259	5 "	1266	25 "
1253	15 "	1260	10 "		

Երեկոյ թ ներ եւ քէյֆեր՝ փետրուարին Տիկ. տանը
10 ու, մայիսին Սօսի խմբի կազմ. երեկոյթ. 53, 20, յունիսին Յովնան
խմբի կազմած երեկոյթից 74, 13, յունիսին Վէման խմբի քաջողեայ
քէֆից 33, 25, յունիսին Արշալոյս խմբի Խանասօրի յիշատակին
80, յունիսին սիրողների կազմած երեկոյթից 30, 48, օգոստոսին
Շղթայ խմբի կազմած երեկոյթից 40, օգոստոսին Արարատեան
խմբի քէֆից 40, սեպտեմբերին Մարց խմբի երեկոյթից 94, 39,
սեպտեմբերին Ժիւսման խմբի երեկոյթից 70 ուռւի:

Ն եր կ ա յ ա ց ու մ ն եր եւ կ օ ն ց եր տ ն եր՝ Բոյր եւ եղ-
բայր ներկայացումից 36, 50 ու, Լիւրայի կազմ. կօնցերտ. 8, 35, Յոյս
խմբի ներկայաց. 30, Վէման խմբի ներկայաց. 22, 10, Սիրաք
խմբի ներկայաց. 25, Արմէնիա եւ Աղբիւր Սերոբ ներկայաց.
40, Վիշապազուր խմբի ներկայաց. 28, 40, Ժիւսման խ. կազմած
վիճակախաղից 10, Արմէնիա խմբի կազմած վիճակախաղ. 15 ու:

Խ մ բ եր ի ամսավճարն եր՝ Ճարտար խ. 28, 75 ու, Գուրգէն
խ. 20, Արշալոյս խ. 75, 85, Արմէնիա խ. 1, 87, Արմէնիա խ. 15,
30, Սիրաք խ. 27, Շղթայ խ. 25, 40, Աղբիւր Սերոբ 50, 30,
Կորինը խ. 30, 70, Արծիւ խ. 8, Արարատ խ. 11, 95, Նէմուր
խ. 21, 5, Վազգէն խ. 44, 60, Ամրոց խ. 10, Վէման խ. 12, 40,
Սօսի խ. 26, Յովնան խ. 13, 40, Ժիւսման խ. 23, Կրակ խ. 14,
Մարցեան խ. 5, 50, Զաքարեան խ. 8, Դուռնա խ. 22, Բարդեն 25,
Նիգ 14, 80, Ժովասար 35, Կարմիր աղբիւր 10, 80, Շիրակ 6, 60 ու:

Ընթանուր զուժար 2849 ուռւի 56 կօպէկ:

ՊԱԿԱՆՆԱՆ Կեդր. Կոմիտէն՝

ՎԱԿԱՆՆԱՆ Կոմիտէն Վարդոյի ծնունդ հանգանակւած՝ Յարոյ
200 Քր., ոսկի, Տիկ-ն 100, Ա. ք. 80, Ոմ 60, Յոյս 20, Երկրագործ 50,
Սուրեն, Վահան Մամիկոնեան, Անդրանիկ, Ժ., Ոմ Վ.,
Հաճի Մայ, Պոնտացի 20-ական, Արաքս, Զօն, Զեփիկ 10-նական,
Հայ ոմ 5: Գումար 705 Քրանք ոսկի:

Ն. 50 լէվ արծաթ, Ժիրայր 40, Տ. Գ. (Ռուսշուգէն) 40,
Սիսակ Սիսակեան 50, Վանայի հայ ուսուցչական խումբ 30,
Խնդակցող 30, Ա. Խ. 25, Ա. Մ. 20, Ոմ 20, Սպայ Աբելան
10, Ռուսշուգի երկու ընկերներ 10, Վանայի Ռշտունի խումբ
10, Ազատ խմբի եռամսեայ հաշիւ 18, Սերոբ 2, Օնիկ Կարա-
պետեան 5, Ոմ 3, Հայ մը 5, Պ. 8, 10, Ս. Թ. 5, Ավո 1,
Հայկ 10, Հայասէր 10, Կ. Պոյետից 10, Ժամբիլ 3, Ն. Պ. 3,
Ոմ 10, Հրաշ Ունեան 5, Մարց 5, Տէր Մարտիրոս Հայր 6
Տէր Սարգիս Հայր 5, Երկու բարեկամներ 10, Վարպետ Գ. Գ. 5:

Արտաքի ծնունդ՝ Ա. Ժ. 1 լէվ արծաթ, Ա. Կիւմիշէ, Խաչո,
Տիւնճէ, Բարսեղ Միսակ, Բէշլայ 5-ական, Սարգիս. Սուրիս,
Սիսակ, Ն. Խ., Յար. Սիսակեան 3-ական, Սարգ., Ժամագործ
Ա. Խոյնթեան, Վարդան, Ման, Ժամագործ, Սիսակ, Գայկ
Ա. Ա., Ռ. Հ., Խոյնթեան, Ոմ, Վարդան, Լիւն եւ Այլ Հ. Մ.,
Թաթո, Ամուսնացեալէն 2-ական:

Ընթանուր զուժար 705 Քրանք ոսկի եւ 475 լէվ արծաթ:

Խմբագրութեան գիմել հետեւեալ հասցեով՝

Rédaction du «Droschak», Genève (Suisse)